

Թ. ՀՈՒՐՁԱՆ  
ԲԱԿԱՍՏԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ  
ՊՈԵՄԱՆԵՐ



ՀԱՅՈՒՏՏՎԱԾ

891.99

14768

3-94 Յուրյուն, թ.

Բանական օպերացունելիք. և  
սպառչությ.

8n504.





ԹԱԹՈՒԼ ՀՈՒՐՑԱՆ

891.99  
3 - 94

ՍՅՈՒԳՎԱՆ Է 1961 թ.

ԲԱՌԱՍՏ ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ  
ՊՈԵՄՆԵՐ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Կազմեց և խմբացեց  
Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐՈՆԱԿԱՐԱՆ ԱԿՈՂԵՑՄԱՆ  
1969

11.768  
11.768  
+ 280440

ТАТУЛ ГУРЯН  
СТИХОТВОРЕНИЯ И ПОЭМЫ  
(На армянском языке)  
Армгиз, Ереван, 1949 г.





## ԹԱՐՈՒԼ ՀՈՒՐՅԱՆ

### (1912—1942)

Ուշադրությամբ թերթելով Հայրենական Մեծ պատերազմում հերոսի ժահով դոհված թաթով Հուրյանի բանաստեղծություններն ու պոեմները, և, ուազին միտքը, որ շանթում է մեզ, խոր ցավ ու լիշտ պատճառում, դարանաստեղծի անժամանակ կորստի գիտակցությունն է: Ինչպիսի՞ ինքնատիսդ ու կենսունակ տաղանդից զրկվեց մեր պոեզիան, ինչպիսի՞ վառվում ու խանդավառ ներկայացուցիչ կորցրեց մեր գրականությունը:

Ծնված լինելով Տաճկահայաստանում, ծնողներից վաղ զրկված պատանին ակաստան է գտնում Բաքվում և այստեղ էլ սովորական իշխանության օրով ստանում է իր կրթությունը, դաստիարակվում՝ սկզբում կոմերիտմիության, ապա նաև պարտիացի շարքերում:

Նրա առաջին ժողովածում՝ «Հողի արյունը» լույս է տեսել 1932 թ., վերջինը՝ «Աստղը» 1943 թ.: Այդ տարիների ընթացքում, լուրջ փոփոխություններ են կատարվել պոետի գրական կյանքում, աճել ու հասունացել է նա ստեղծագործորեն ու գաղափարապես: Հուրյանի յուրաքանչյուր նոր գործը մի քայլ առաջ է եղել նախորդի համեմատությամբ: Նրա գրական զարգացումը առաջին դրահից մինչեւ վերջին շրջանի ստեղծագործությունները («Սայաթ-Նովա», պուստ, «Ֆրիկ» շափածո դրաման և բանաստեղծությունների Սկասովովովան շարքը), վկայում են բանաստեղծի անընդհատ աճի, նրա ստեղծագործական կենսունակության և տաղանդի մասին:

Գրական համբաւվ ստեղծելու համար թաթով Հուրյանը աղավինում էր միայն իր ընդունակություններին, խորապես գիտակցելով, որ իրեն տրված է «երգելու ձիրքը»: Հանդես բերելով խստապահանջություն դնալի:

իր զրական վաստակը, նա չանք չէր խնայում կատարելագոծներու բանաստեղծական խոսքը և հոգու խորրում զրտկան նոր բարձանքների ու վսեմ սկզբունքների մտահն էր մտորում.

Մի եղե՛ք ճամ, վատին ընկեր,  
Մի' ժայլե՞ք երեր ու զլխանակ, —  
Բարձր սավառնե՛ք միշտ, իմ երգե՛ր,  
Բարձրորյանների դուք սիրանա:

Հուրյանը նուրբ ու տաղանդովոր բանաստեղծ էր, կրտկոտ ու խանդավառ հայրենասեր: Հայրենական մեծ պատերազմը բացահայտեց ու միայն նրա տաղանդի նոր, մինչև այդ անհայտ գծերը, այլև ցուցադրեց նրան որպես խիզախ մարտիկ, հայրենիքին նվիրված անվեհիր զինվոր: Պատերազմի տուցին խոկ օրերին՝

Նա բողեց տունն իր, մանկանց սիրած,  
Նա բողեց տնավարա ու անտիպ երկեր

և մեկնեց ռազմահամատու: Այնուն, Դրիմի լեռներում ու ոուսական ռազմական փառքի քաղաքում — Սևաստոպոլում, նա «անվախ» և կրծքարաց» կովում է սովորական հողի տնկախությանը սովորացող շոր ու նենդ ոստինների դիմ:

Չեռքին նոնակներ  
Ու սրտի մեջ կրակի:

Մարտում Հուրյանը ծանր վիրավորվում է, բայց ապրելու անհուն ծարավը հաղթահարում է մահին և թողած հիվանդանոց ու դթության կարեկից քույրերին, պոետը նորից վերագանում է մարտական շարքերը, իր դինակից ընկերների մոտ:

Վերադառնա ձեզ մոտ, կովենք իմ ընկերներ,  
Կրծքներս դեմ աված շարիքին աշխարհի, —  
Լավ է երգը շուրբին ոտքի վրա մեռնել,  
Քան ապրել շղթայված, ուպես նորս ու գերի:

Հուրյանի վերջին հրաժեշտի բանաստեղծությունները գրված են սրտի արյումով: Նա ընկավ երդը շուրբին, հաստատուն կանգնած իր մարտական դիրքերում, ինչպիս վայել է հայրենասեր ու քաջ ռազմիկին: Բ. Հուրյանը հետմահու պարգևատրվում է Կարմիր Դրոշի շքանշանով: Գեղ նախքան պատերազմը, Հուրյանը տեսնում էր իր հայրենիքի

հզորությունը, նրա աննախընթաց վերելքը՝ սոյիալիզմի ուղիով և լովոա  
հայարտության զգացմունքով: Հայրենիքի նկատմամբ անհուն սիրով, տո-  
դորված պոետը հիացած բացադանչում է. «Իմ երկրից լավ անուն չկա  
աշխարհում»:

Այսպես էր նրան պատկերանում վեհ ու հզոր իր հայրենիքը, որը  
ողողված Ստալինյան կոնստիտուցիայի ճառագայթներով և Կրեմլի աշ-  
տարակից փայլող ամոքիչ ու վառ տստղի լույսով, ազդարարում է մարդ-  
կությանը՝ կապիտալիստական ռեակցիայի ու խավարի քառոսից դեպի  
սպայծառ, երջանիկ հնոուները դուրս դալու լայն հանապարհը: Այդ գա-  
ղափարը նրան ոգեստել է ստեղծագործելու մեր սկզբիայի բնոտիր նմուշ-  
ներից մեկը՝ «Աստղ» վերնագրով.

Ես նայում եմ երկնին,  
Երկնակամարին,  
Եվ ասում եմ, իմ անգին,  
Աստղիկ իմ բարի,—  
Եմ ասողը ամենից  
Պայծառ է շողում,  
Աղջ աշխարհն է իր անրիծ  
Լույսով ողողում:

Եվ ոչ միայն «Աստղ» սքանչելի բանաստեղծությունը, այլև հեղինակի  
ողջ ստեղծագործությունը համակված է աղնիվ և սպայծառ սովորական  
հայրենասիրությամբ:

Հայրենասիրությունը Հուրյանի համար ուղեցուց ասող է եղեւ,  
նրա վարքագիծը բնորոշող գլխավոր գիծ: Եվ աղատահական չէ, որ բա-  
նաստեղծը սկատերագմի ամենածանր օրերին, ցուցադրելով իր հոգու  
արիությունը, սազմահակատի ծխի ու բոցերի միջից տեսնում էր հաղ-  
թանակի ծիրանավառ արշալույսը.

Պատերազմի ծովսն է ձեր նակատը փակել,  
Յայց կժայտան նորից կատաքները ձեր վես,—  
Գու հավատով լեցուն, մարտնչիր, իմ ընկե՛ր,  
Վաղը կպարուրի նաղբուրյան լույսը ֆեզ,  
Հաղթանակի արել կվառվի հրով՝  
Ազատուրյան անխոս ու սուրբ լուսաբացին,  
Եվ լեռներն ու ծովը միշտ կհիշեն սիրով  
Գանգքագիսակ ու բաջ այն հայ բանաստեղծին:

Դա բանաստեղծ հայրենասիրի հրաժեշտի խոսքն էր, նրա մարտո-  
կան սրտի վերջին հնչյունը:

Հուրյանը դրական մի դաշտ տունկ էր, որը բարձրանում էր՝ պոնտական հաստատում տրադիցիաների վրա։ Նրա նոր, փարթամորեն բացվող տաղանդը խոստանում էր առատ ու հասուն բերք։ Դրա առաջին պտուղներն արդեն հրապարակի վրա են։ Ես նկատի ունեմ, ամենից առաջ, մեր գրականության մեջ ինքնուրույն տեղ գրավող «Սայաթ Նովա» լեռիկական պոեմը, «Ֆրիկ» շափածո դրաման և պատերազմի շրջանում գրած բանաստեղծությունների շարքը։ Այս գրվածքների մնջ թաթուլ Հուրյանի պոետական ձիրքը, նրա թափն ու տեմսերամենուր ցայտուն արտահայտություն են դաել։ Հայ կովտուրայի հանճարեղ ներկայացուցիչներին նվիրված այդ երկու ծավալուն գրվածքները, նորություն են մեր պոեղիայում, ոչ միայն իրենց թեմատիկայով ու արձարձած հարցերով, այլև բանաստեղծական ձևով ու պատկերներով։ Դրանք վարպետ գրչի արդյունք են։ «Ֆրիկ» շափածո դրամայում արտահայտված է ոչ միայն ուժեղ հայրենասիրական կիրք, պատկերված է հայ ժողովրդի ըմբոստցումը հայրենի և օտար կեղերիների դեմ, այլև հաղորդված է վերածնության շունչն ու տրամադրությունը։

Նույնպիսի վարպետությամբ են գրված նրա լիրիկական բանաստեղծությունների շարքը՝ «Աստղ», «Երկունք», «Հրավիր», «Մուխամմազներ», «Արարսի ափին», և վերջապես աբդեն հիշատակված պատերազմական բանաստեղծությունները, որոնք Հայրենական պատերազմին նվիրված պոեղիայի մեջ առաջնակարգ տեղ են գրավում։

Պատերազմի ծանր օրերին Հուրյանի ձայնը շի լոռում, նա նոր թափած ստեղծագործում է փայլուն երգեր ստալինյան բարեկամությամբ ձուլված սովորական ժողովրդի և նրա հարազատ զավակների հերոսության մասին, հանուն կյանքի ու երջանկության դովերդում է մահն արհամարհելու նրանց սրբազն ձդումը։

Ման են ընդունում իմ ընկերները,  
Բայց նահանջ չկա, չկա մեզ համար,  
Ընկածի կողմին կանգնում է նորը  
Պատրաստ մեռնելու նա դյուցազնարաց։  
Մանը նայում է անզոր, զարմացած,  
Մանը սարսափած նեռու է զնում  
Եվ ներսուրյունն ինքը ցած իջած  
Նրանց նակատին պսակ է դնում։

Պատերազմը Հուրյանի բանաստեղծությունների մեջ նկարագրված է շոշափելիորեն ոեալ՝ ռարյան ու մահվան անխուսափելի հետեանքներով։ Նրա այդ գրվածքներից բուրում է Հայրենական պատերազմի շունչը, վառողի հոտը։

Պոետը խորապես գիտակցում էր, որ արդար գործի համար հերոսի մահով ընկնողը՝ անմահանում է սերունդների հիշողության մեջ։ Դա հենց կյանքի համար մղվող պայքարում ընկած մարտիկի ռգեղեցիկ ժահնչ է, որի մասին այնքան սրտառուշ երգեր է հորինել բանաստեղծը։

Այս սրբազն ժամին նոզ չէ մանը այնքան,  
Թող գալիքի երզը մեզ նուշարձան լինի  
Եվ սերունդներն ասեն՝ ներոսարար ընկան  
Հանուն Հայրենիքի, հանուն ՍՏԱԼԻՆԻ։

Նահատակվելով մեծ գործի համար, Հուրյանը թողեց պոետական մի պատկառելի ժառանգություն, որը բոլոր կողմերով արժանի է ուշադրության։ Ճիշտ է, և մենք դիտենք, որ այդ բոլորը դեռևս նրա վերջին խոսքը չէր, — նա չհասցրեց ասել այդ խոսքը։ Սակայն նկատի առնելով նրա ստեղծագործական զարգացումը, կարելի է վստահ ասել, որ Հուրյանը շատ բանով դեռ կհարստացներ սովետահայ պոեզիան, եթե այդպես վաղ շրջատվեր նրա երիտասարդ կյանքի թելը։

Հուրյանի գրական ժառանգությունը մեծ չէ ծավալով, բայց հարստա ու բաղմազան է իր թեմատիկայով ու ընդգրկած հարցերով, առաջադրած պրոբլեմներով, գրական ժանրերով։ Նրա երգերը հագեցված են գաղափարական խորը բովանդակությամբ և բոցավառ հայրենասիրությամբ։ Այդ ժառանգությունը պայծառ գովքն է հայրենիքի ազատության ու փառքի համար կատարված սխրագործությունների՝ լինի դա հեռավոր անցյալում՝ Ֆրիկի ու Սայաթ-Նովայի էպոխայում, թե քաղաքացիական կոխվելու շրջանում, սոցիալիստական շինարարության ժամանակ, թե Հայրենական Մեծ պատերազմի աճեղ օրերին։


Թաթուլ Հուրյանի ստեղծագործության մյուս բնորոշ գիծը, դա՝ գրական որոնումների նկատելի ձգտումն է։ Նա չի սահմանափակվել միայն քաղաքացիական շնչով գրված ոտանավորներով, այլ որոնել է գրական նոր ձևեր ու պրիումներ։ Նա իր ուժերը փորձել է սիրային մուխամազնություններ ու պրիումներ ու ազգային պատեղամարտություններում, գրել է տրիոլետներ և ինքնարնուներում ու լիրիկական պոեմներում, գրել է տաղաշափական-լեզվական նորամուծության թագրող երգեր, կատարել է տաղաշափական-լեզվական նորամուծության փորձեր և այդ փորձերի մեջ հաջող քննություն բռնել։ Նա թարգմանել է Պուշկինի և Նիկամու, Լերմոնտովի և Սայակովսկու, Սամեդ Վուրդունի և այլ բանաստեղծների գործերից։

Բուսական, հատկապես սովետական ուսու պահպիայի բարերար աղեցությունը Հուրյանի ստեղծագործության վրա փաստ է և ինքը հպարտությամբ էր Սայակովսկուն համարում իր գրական ուսուցիչը։ Հուրյանը ձգտում էր նորարարության ժամանակակից պոետներից

քշերն ևն Հուրյանի նման բազմաժանրու Դրական տարրեր ձեերով ու  
ժանրերով սովետահայ պոեզիան հարստացնելու և կատարելադործելու  
այդ ձգտումը արժանի է լուրջ ուշադրության, դա ճշմարիտ պոետական  
տաղանդի ապացույց է:

Հուրյանն արդեն ձեակերպված բանաստեղծ էր, նորարար լինելու  
բոլոր տվյալներով օժտված արվեստագիտ, նա մշակում էր ինքնուրույն  
ոճ, ստեղծագործորեն հաղթահարելով դրական ազդեցությունները: Դրա-  
կան լուրջ արժեք ներկայացնելու հետ միասին նրա պահտական ժառան-  
կությունն ունի և խոշոր դաստիարակչական նշանակություն. այն ար-  
ժանի է լայն մասսայականացման և պետք է այդ կատարել: Դա պահան-  
ջում է ոչ միայն մեր պարտքը հայրենիքի աղատության ու անկախության  
համար քաջարար դոհված դրող-մարտիկի և դրող ընկերոջ հիշատակի  
հանդեպ, այլև շահը այն դրականության, որի վառվուն ու խանդավառ  
ներկայացուցիչն է հանդիսանում վաղամեռ բանաստեղծը:

Ա.Բ.Տ. ՈՍԿԵՐՉՅԱՆ



ԱԿԻԵՐՋԱՆՔ





## ԱՍԴԸ

1

Գիշեր, ահա աստղերն են  
Երկնակամարում:  
Գիշեր, ահա աստղերն են  
Վասված ու մարում:

Երկինքը ջինջ է, կապույտ,  
Փռված գորդի պես,  
Հովը տալիս է համբույս,  
Ուժ որ հանդիպես:

Ես հայում եմ երկնքին,  
Երկնակամարին.  
— Ու՞ր ես, տատիկ իմ անդին,  
Իմ հերդ, իմ բարի...

Երբ ձնվեցի մեր դյուզում,  
Մին հին խրճիթում,  
Մատոս ալյուր էր մաղում  
Ու մեղմ աղոթում:

Երբ ձնվեցի, նա տսաց  
Զայնով զողովուն...  
Երկինքն ամպոտ էր ու թաց  
Եղ շունչն էր հաջում...

— Ոչ մի ասդու չի շողում,  
Երկինքը մութէ է,  
Առող չունես, չան բալես,  
Ասովտծ անզութէ է...

Այսպիս եկա ևս աշխարհ  
Մեր հին տնակում,  
Ու մեծացա ինչուն ծառ  
Երկնքի տակ լուրի...

Հորս հետ հանդ գնացի  
Մերի ու ստարաց,  
Երկնքի տակ քնեցի  
Ասողերով հարստծ:

Ինչուն քամուց քշված ամսէ  
Տարիներն անցան,  
Ու ես հասա ինչությամբ  
Օլերին ուղաջառ...

## 2

Գիշեր. ահա տառերն են  
Երկնակամարում.  
Գիշեր. ահա տառերն են  
Դառվում ու մարում:

Երկինքը ջենչ է, կապույտ  
Փոված գորդի ոլես,  
Հովը տալիս է համբույր,  
Ում որ հանդիսես


Ես հայում եմ երկնքին,  
Երկնակամարին,  
Եվ սոսում եմ,—իմ անդին,  
Տառիլ իմ բարի,—


Եմ աստղը ամենից  
Պայծառ է շողում,  
Ողջ աշխարհն է իր անքիծ  
Լույսով ողողում:

Եմ աստղը կրկմլի  
Աստղն է անմար,  
Որ շողում է, լույս տալիս  
Աժոքիչ ու վաս:


Եմ աստղը նա է, նա  
Վառվառ սուստկի,  
Որ շողում է կրկմլյան  
Մեծ աշտարակից:


Եթիոնների աստղ, դժւ  
Վառվիքը, հուրճը,  
Երջանկություն դու մարդու,  
Դու ցնձության ջան:





# ՄԵՎԱՍՈՂՈԼՅԱ ԲԱԼԱՏՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ





## ՍԵՎԱՍՈՅՈՒԾ

Եւ ծովի եղերքին նազող գեղեցկուհի,  
Սկզբովայինների հպարտ մայրաքաղաք,  
Ռուսական զենքի ամրոց անպարտ ու հին,  
Դրդովեցին կյանքդ շինարար ու խաղաղ:

Ես քայլում եմ ահա քո դու փողոցներով,  
Ամենուր զենքերի շառաչյունն եմ լսում,  
Սիրտս փոթորկում է սրբազան մի հրով,  
Երդերո դառնում են լոկ վրեժ ու ցասում:

Բաղաք փառքի, սիրո, քաղաք հեքիաթական,  
Բախումների հանդեմ անպարտ ու անզիջում,  
Բո փեշերին ահա հաղարները ընկան,  
Թշնամին է խեղղվում իր իսկ արյան լճում:

Բայց սողում է նորից առ դեպի քեզ, քաղաք,  
Վիրավոր հրեշի ցնորքով խելազար,  
Ռւզում է քո փառքի, քո պատվի հետ խաղալ,  
Քեզ ուղում է դարձնել ստրուկ ու դետնահար:

Բայց հպարտ է եղել քո զլուխը միշտ էւ,  
Բո անխորտակ մեջքը դեռ չի տեսել գետին,  
Պարտությունը երրեք քո կրծքին չի նստել,  
Ամոթանքի ստվեր չի իջել քո ճակտին:



Ի՞նձ հետ զրուցում են վասքիդ արձանները,  
Բաստիոններդ լոին, ամրոցներդ անառ,  
Նախիմովն է կանգնած նայում հեռունելլ,  
Ծովակալի աչքով հալարտ ու անբարբար:

Կոռնիլովն է նայում տոյուծներին իր քաջ,  
Բարի երթ է մաղթում ու վերադարձ խնդուն,  
Եվ գնում են անկանդ ծովայիններն առաջ,  
Հողն է նրանց հզոր ոտքերի տակ դողում:

Եվ հիշում եմ, քաղաք, դեկտեմբերդ մոայլ,  
Հորիղոնդ ծխի սև ամպերով պատաժ,  
Ֆաշիստական հորդան հանց իժերի վտառ  
Պարզում է գետի քեզ ճանկելն իր արնոտած:

Բայց ետ ևս շպրտում հրեշին խելագար,  
Բազում բաստիոններիդ կրակով մահացու,  
Քո պատմության դրքում հին ու սխրանքավառ  
Մի նոր, հերոսական վասքի դլուխ բացում:

Սև ծովի եղերքին նազող գեղեցկուհի,  
Սևծովայինների մայրաքաղաք հալարտ,  
Ռուսական զենքի բաստիոն անպարտ ու հին,—  
Միշտ անպարտ եռ եղել ու կմնաս անպարտ:  
Սևաստոպոլ

## ԵՐԿՈՒ ՄԱՆՈՒԿ

Գարնանային երկնի տակ երկու մանուկ են խաղում,  
Երկու արդար էակներ երգում են ու ծիծաղում:  
Գարնան զովս է սկսվում նրանց զսկյա մաղերին,  
Կապույտ երկինք է թափովել կարծես նրանց ուսերին:  
Մանկան անզուսպ հրճվանքով գարնան երկինք են հայում,  
Ամեն անցնող դարձողի գրավում են, հմայում:  
Ռազմի ծխով պարուրված ու պաշարված այս ըերդում  
Մանուկներն այս գեղաչյա մարդու հույզերն են թերթում,  
Ես անցնում եմ համբաքայլ նրանց խաղով հմայված,  
Ծով կարոտից իմ սիրտը դառնում է խենթ ու արրած:  
Ես հիշում եմ իմ մանկանց՝ գանգրագիսակ, ծիծաղաչ,  
Հրաշքի պես ելնում են կարծես նրանք իմ առաջ:  
Սիրտու է ծփում անհանդիստ, լցված սիրով հայրական,  
Ես բռնում եմ, համբուրում թաթիկները մանկական,  
Գանգուրներն եմ վայփայում մանուկների այդ սիրուն,  
Մտքիս թեով թռչում եմ, սավառնում եմ գեղի տուն...  
Բայց ռազմի բոցերում երազանքն է լինում կարճ...  
Թողած մանկանց այդ սիրուն ես քայլում եմ գեղ առաջ.—  
Հանկարծ գարնան երկինքն է շառագունում կը ակից,  
Թշնամական ուրուրն է սողում ամպի արանքից:  
Զարագուշակ կոխնչով նա ոռմբեր է ցած նետում,  
Ծխի սև ամպն է ելնում, արևի գեմքը պատում...  
Ես նետվում եմ խենթի պես մանուկների ետեից,  
Մահվան վտանգ մոռացած և մոռացած անգամ ինձ...  
Սակայն ուշ է... Ահավոր մի եղեռն է կատարվել,—  
Մանկանց մեռած դեմքերին անմեղ ժպիտ է ստել:

Գարնան զովի կտնչերը էլ չեն լսում, չեն լսում,  
Շրթունքները պապանձիկել, չեն ծիծաղում, չեն խոսում:  
Ես կանգնած եմ դլխահակ այս ահավոր երազում,  
Աչքերիցս վրեժի այլող արցունքն է հոսում:  
Ողբերզության այս զիրքը դարնան երկինքը կարգաց,  
Եվ մեծ սիրու երկնքի կարեկցակոծ թպրտաց:

\* \* \*

Նորից դարնան երկինքն է կապույտ ցոլքերն իլ մաղում,  
Մեր փողոցում այս պահին կատարում են մի թաղում:  
Նորից գարնան երկինքն է անհոգորեն ծիծաղում,  
Երկու մանուկ հանգչում են մի անպաճույճ դադաղում:  
—Ո՞վ դուք, մայրեր սիրասուն, և դուք հայրեր տշխարհի,  
Եկեք թաղման այս ծեսին, թող ձեր սիրու բարբառի  
Դուք արցունքի վիռխարեն վրեժի խոռք կարկացեք,  
Այլող վրեժ ձեր սրտում գեղի ճակատ խոյացեք,—  
Հսնուն մանկանց ձեր սիրուն, հանուն հացի ձեր արդար,  
Բոլոր հայրեր տշխարհի, բոլոր մայրեր վշտախառ:

Սեաստովու

## ՄԵԿԵՆԶԵՎՅԱՆ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Լիոներ Մեկենզեվյան, ծառեր թևատահատված  
Եվ թվուտներ դալար, արյունոտված, անկյանք,  
Բանաստեղծն է ահա ձեր փեշերին կանգնած,  
Զեռքին նոնակներ ու սրտի մեջ կրակ:

Նա թողել է տունն իր և իր մանկանց սիրած,  
Նա երգեր է. թողել անավարտ ու անտիոլ,  
Զեր փեշերին, լիոներ, անվախ ու կրծքաբաց  
Մարտ է մղում ըոլոր սոսխների հանդեպ:

Զեղ հետ, իմ ընկերներ, թող մարտը ըորը ըոքին,  
Կովենք ահնահանջ արդարության համար,  
Զեղ հետ է, ընկերներ. հանքափորը Բաքվին,  
Զեղ հետ է Սկանի ձկնորսը խանդավառ:

Զեղ հետ Վրաստանի կիւրոնի դաշտերից  
Կովում է վրացին Տարիելի քաջ սրտով,  
Որպես կայծակ իջած փոթորկոտ ամպերից  
Շահթում է թշնամուն ծովայինը վրդով:

Ես ձեղ կոչ եմ նետում, ընկերներ մարտական,  
Քայլում եմ կողք-կողքի պատերազմի ըոցում,  
Ովքեր սրով եկան՝ սրերից էլ ընկան, —  
Պատմությունն է այդպիս շուրթերով դրուցում:

Մեկենողեվյան լեռներ, դուք վկա եք եղել  
Բազում բախումների՝ մեծ ու անհավասար,  
Մեր շարքերն եմ տեսել խիզախ ու աներեր  
Եվ մեր գլոշներն եմ տեսել արյունավառ:

Պատերազմի ծուխն է ձեր ճակատը ծածկել,  
Բայց կժպտան նորից կատարները ձեր վես,—  
Դու հավատով լեցուն, մարտնչիր, իմ ընկեր,  
Վաղը կուարուրի հաղթության լույսը քեզ:

Հաղթանակի արել կվառվի հրավ,  
Ազատության անխառ ու սուրբ լուսարացին,  
Եվ լեռներն ու ծովը միշտ կհիշեն սիրով  
Գանդը ագիսակ ու քաջ այն հայ բանաստեղծին:

Դորձող բանակ

## ՎԵՐԱԴԱՐՁ

Թողած հիվանդանոց և անկողին ճերմակ  
Եվ հրաժեշտ տալով գթության քույրերին,  
Նորից ձեղ հետ եմ ես, բախումներում այս տաք,  
Ուր արյունն է հոսում իմ քաջ եղբայրների:

Թշնամական գնդակն ինձ կյանքից չղլկեց,  
Նա չի կարող հատել կյանքը բանաստեղծի,  
Ապրելու, հաղթելու ծարտին էր իմ մեջ մեծ,  
Ես այդ անհուն տենչով մահվանը հաղթեցի:

Վերադարձա ձեղ մոտ. կովենք իմ ընկերներ,  
Կրծքներս դեմ տված չարիքին աշխարհի,—  
Լավ է երգը շուրթին, ոտքի վրա մեռնել,  
Բան ապրել շղթայված, որպես մորտ ու դերի:

Ահա ինչպես լավա ֆաշիստական հորդան  
Խոյանում է մեր դեմ իր արյունով հարբած,  
Արհամարհենք մահը, դիմադրենք նրան,  
Բնաջնջենք նրա ոհմակները քաղցած:

Ու առյուծներ, եկեք, եկեք իմ ետեից,  
Ես, հայ բանաստեղծս ձեղ տանում եմ մարտի,—  
Թող մեր պատվին չիջնի ամոթի ոչ մի բիծ,  
Թող մեր հողում մեռնի թշնամին տմարդի:

Ծխում են, հրդեհվում բլուրները վերձիղ,  
Մալախովյան կուրպանն է խոսում անդադար,  
Մարտի մեջ են նետվում ինչպես հոլարա տրծիով  
Սավառնորդները մեր՝ երկնքի տիրակալ:

Բաստիոնները խոժու հեռում են կրակից,  
Մահ, մահ են առաքում ոսոխների համար  
Եվ ղծանավերը ծանր ու անհանդիսա  
Կարդում են թշնամուն դատավճիռ ու մահ:

Ահեղ են դեմքերը ընկերների իմ քաջ,—  
Ընկնում են, բայց ելնում արնաթաթախ նորից,  
Եվ գնում են նորից թշնամու դեմ, առաջ,—  
Սրբազն վրեժով կախարդված ու անբիծ:

Առաջ, միայն առաջ, կլոծքներս լաց, երդով,  
Սևաստովոլ հերսո, մեղ հետ եռ ընթանում,  
Արյունն է հորդանում քո վեշերի ներքո,  
Թշնամու դիերից լեռներ են բարձրանում:

Այս սրբազն ժամին հոգ չի մտիլ այնքան,  
Թող դալիքի երդը մեղ հուշաբան լինի,  
Եվ սերունդներն ասեն՝ հերոսաբար ընկան  
Հանուն Հայրենիքի, հանուն Ստալինի:

Սևաստովոլի սաղմաճակատ  
18-ին հունիսի 1942 թ.

## ԾԽՈՒՄ ԵՆ ՆՈՐԻՑ

Ծխում են նորից ձեր կատարները,  
Լեռներ սիդաղանձ, Դրիմյան լեռներ,  
Արժե աչքերը հառած ձեր վերը,  
Զեր սեղ գաղաթին—ձեզ համար մեռներ

Կյանքն ու մահն այստեղ բախվում են իբարենչալես օրերին այն դեկտեմբերյան,  
Արյունն է հոսում դետերից վարար  
Եվ գաղաղում է թշնամին դաժան:

Գալիս են նրանց զնդերը նորից  
Եվ զրահավոր են նենդ, և՛ խարդախ,  
Քեզ օղակելու ցամաքից, վերից  
Եվ մռայլելու քո կյանքը ուրախ

Բոցն է բռնկվում ամեն թփի տակ,  
Ականն է խոսում ամեն մի փոսից,  
Երկինք և դետինք շիկնած բռվանդակ  
Նման են ահեղ այն տարտարոսին:


Ծովայինները իրենց ծով սրտով,  
Ինչպես մըլիկը ծովերից անձիր  
Կռվում են խիղախ, կռվում են վրդով  
Եվ սարսափում է օտարերկրացին:

Մահ են ընդունում իմ ընկերները,  
Բայց նոհանջ չկա, չկա մեղ համար,  
Ընկածի կողքին կանդնում է նորը  
Պատրաստ մեռնելու նա դյուցազնաբար:

Մահը նայում է անզոր, զարմացած,  
Մահը սարսափած հեռու է գնում  
Եվ հերոսությունն ինքը ցած իջած  
Նրանց ճակատին ոլսակ է գնում:

Ծխում են նորից ձեր կատարները,  
Լիոներ սիդապանձ, Դըիմյան լիոներ,  
Քառք է աչքերը հառած ձեր վերը,  
Զեղ հոմար կովել, ձեղ համար մեռնել:

Սիաստոպոլիս սաղմաճակտու  
19-ին հունիսի 1942 թ.



ԱՐՄԱՆՈՒԹՅՈՒՆ



18

King Edward VII

## Գ Ո Ր Ի Ո Ւ Մ

Քաղաք իմ, դու վոքք ես, լայց գերիչ չափազանց,—  
Արդասաբեր ծառեր կքած իմ առաջին,—  
Հիմա աշուն է գիրդ, ծառերի տակ խաղալ,  
Եվ քամին է խաղում բլուրների լանջին,  
Տանիքների վրա աշնան քամին աղատ:

Բայց սիրու ի՞ է պարնան վեհ զնպոցով,  
Գալնան բունն է հիմա աղմկում իմ հողում.  
Ամպեր թուխ, երկնային, կայծակնարեր ու ծով,  
Ճախրում է իմ հողին ձեղ նման անխոկում,  
Լի տնառնման, անհուն կըալով ու բոցով:

Ամոթխած կույսի ողես դու նաղում ես ահա  
Ռսկյա դարդերի մեջ, բլուրների գրկում,  
Եվ ես քեղնով գերված, խոհուն ու գլխահակ  
Բունն իմ դիտում կանգնած ժայռերին ահարկու  
Եվ հնամյա բերդը խուլ դարերի ալահակ:

Բանաստեղծը սիրան իր քեղ նվեր է բերել,  
Իմ հայրենի քաղաք, նվիրական օջախ,  
Անհանդիստ է այսօր, խոյանում է վերի  
Եվ կոչումին երգչի հլու, անդավաճան,  
Գովերդում է նա քեղ և քո դեղը արե:

Գորի, Գորի, քաղաք հնագարյան ու հին,  
Դու կըել ես մեջքիդ լուծը մոհուլական,  
Ծ, դու վրացական չքնաղ դեղեցկուհի,  
Քեզ տիրել են, դերել, քանդել հաղաք անգամ,  
Ավերել, ավերել, տվել հրին, մահին:

Բայց հուրը քո սրտում դու պահել ես անմար,  
Մոխիբների միջին բորբոք ես մնացել,  
Գալիք՝ լավ դարերի, սերունդների համար,  
Խնամել քո կաթով մանկանն առյուծաձն,  
Գուրգուրել, թհ տվել, նետել կյանքի պայքար:

Եվ քեզ, քեզ վիճակվեց նվիրել աշխարհին  
Տառապով մարդկության ցավերը ամոքով,  
Խիզախամիտ, անկոր ու մեծ այն հանճարին,  
Ու ձուլված էր քո մեջ իր հանճարի ողով,  
Ու տերերի դեմ քեզ դուրս հանեց պայքարի:

Դու նրան մայր եղաք քնքշանքներով առատ,  
Դզվանքներով առատ ու բարեսիրտ այնքան,  
Քաղցի, հոգսի պահին քո զրկի մեջ առար,  
Սփոփեցիր նրան, զուրգուրեցիր նրան,  
Ոգի, ավյուն տվիր և մղեցիր առաջ:

Ահա ես կարոտիս ճանապարհը բռնած,  
Ու զլխարաց ահա, հաղիս բլուզ խակի,  
Գանգուրներիս վրա աշնան եղյամը թաց,  
Մոտենում են անշուք հողե այն տնակին,  
Ուր ձմռան մի գիշեր նա աշխարհին խնդաց:

Ուր ձմռան մի գիշեր, երբ աշխարհն էր խոկում,  
Երբ տերերը քեզնից քամում էին արցունք,  
Երբ քո շուրջը մութ էր, երբ անձրին էր թակում,  
Այստեղ երկունք եղավ, մի հաղթական երկունք  
Եվ Արեւ ծնվեց վոքրիկ այս տնակում:

## ՄԵՏԵԽ

Ով Մետեխս մոայլ, խոժոռատես,  
Դու արծիզների վանդակ երկաթյա,  
Ահա թերթում եմ քո էջերը ես,  
Որպես անցյալի մի հին մատյան:

Մտնում եմ մեկ-մեկ խուցերը քո,  
Սրտիս մեջ քո հին ողատմությունները,  
Ներքեում թուռն է զարդարված ծաղկով  
Օրորվում գեղի հետոները:

Թուռն օրորվում է զարխվարիս,  
Մետեխս, լիղելով քո ոտքի փոշին,  
Դու, կամակատար Հյուսիսի ցարի,  
Դու անցյալի սե, ճզմող կոշիկ:

Դու մեք հայրերի, եղբայրների  
Գերեզմանն եղար անագորույն,  
Եվ ոչ մի սերունդ քեզ այդ չի ների,  
Քեզ, Մետեխս մոայլ, կատի խորոնկ:

Զկնոլս Պեպոյից սկսած մինչ  
Մի ամբողջ սերունդ, մի ամբողջ բանակ,  
Խիղախառնի, և՛ հպատ, և՛ ջինջ,  
Մարեցիլ քո մութ կամարի տակ:

Ամանց այստեղից հյուծված, անդոր,  
Ոտքերին շղթա, էտապով դաժան  
Քշեցին հյուսիս ու հեռու աքսոր,  
Դեղլի մահ, դեպի ու դերեկման:

Ար մարեն հույսը նրանց սրտում  
Առ լավ ապաղան և առ դալիքը...  
Ում ինչ, թե մայրն է մահանում ցրտում,  
Ում ինչ՝ մուրում է որբ մանկիկը...

Բայց Մետեխ, ոչ քո խստությունը,  
Քո սառնությունը գերեզմանային,  
Եվ ոչ ցարական ժանտ թուրն ու թույնը  
Երբեք չընկճեցին այն հոկային:

Եվ ոչ սարսափը կախաղանի,  
Ոչ աքսորական վիճակը ծանր,  
Եվ ոչ կյանքը ցուրտ Տուրուխանի  
Չըմթագնեցին այն կածանը:

Որով նա հպարտ քայլում էր միշտ  
Հուռ շղթաների, սրերի միջով,  
Գլուխը բարձը, ճակատը անվիշտ,  
Հայացքով կրակ ու անդիջող:

Խորին հարդանքով ու անշշուկ,  
Ահա մանում եմ ես այն կամերան,  
Որտեղ մի օր կարոտով անհուն  
Նայել է լեռներին հայրենական:

Եվ այստեղ ահա, մութ զնդանում,  
Կապանքում անդամ նա հպարտ, պարթե,  
Լենինյան ողով մարտ էր ընթանում,  
Հայրենի հողի ոսոխի դեմ:

\* \* \*

Յուռն է գալարվում փոշեթաթախ,  
Քամին սուրում է մարմանդ ու հուշիկ,  
Ամպի վելոմակը փաթաթ առ փաթաթ  
Ահա իջնում է լեռան դոշին:

Ով Մետեխ մոտայլ, խոժոռադեմ,  
Ով արծիզների վանդակ երկաթյա,  
Ահա կանգնել եմ ես մոտայլ քո դեմ,  
Դու անցյալ կյանքի դաժան մատյան:

## ՌԱԻՍԱ ՌԻԺԻԿ

Նրա համար ոչ մի Տրոյա չայրեցին,  
Նա իս կյանքում չեղավ թշուռության պատճառ,—  
Նա զավող էր գնում առավոտը վեցին,  
Աշխատում մինչ դիշեր ու հոգնում էր անչափ:

Մի տղայի սիրեց իր հույզերում թաքուն,—  
Նրան զինվոր տարան ու նա կռւից չեկավ,  
Մայրն էր ծանր վշտից հեծում, աղաղակում,  
Գլուխը կարեքի հողմերի գեմ թեքած:

Այսպես օրեր անցան: Նա մեծացավ էլի  
Եվ հասկացավ. կյանքում ինչը պետք է փոխել,  
Ինչպես պետք է զուրս գալ դժվարություններից,  
Որ չտանեն հորը, քաղցից մեռնի խոխեն:

Նա հասկացավ, հետո հրացանը ուսած  
Մեծ շարքերում կտնվնեց, պարտիղան ու մարտիկ,  
Ոչ ոքից չպետք է փրկությունը հուսալ,  
Քանի որ ձեռք ունի, պետքական մեծ մարտին:

Նա գլուխը անցավ ջոկատների կարմիր  
Եվ Միքիրից ելան, արշավեցին առաջ,  
Պուրդան սողոսկում էր, ստույնում մարմին,  
Նրանք փոխում էին նոր դիրքերը առած:

Սողում էին առաջ պարտիղաններն անահ,  
Ռախան անվրեալ կրակում էր արի,  
Ու երկրի առաջ նորից չբարձրանան  
Հաղար ճերմակ թաթեր, հաղար տեր ու կարիք:—

Որ տղային նորից կովի դաշտ չտանեն,  
Որ չմեռնի մայրը սուր կարիքին գերի,  
Որ չմնա կյանքը մահու ձեռին անել  
Եվ արյունը հոսի երկըի լայն թոքերից:

Նա ջոկատն իր տարավ վտանգների միջով,  
Հյուսիսյան ցրտաշունչ երկնքի տակ  
Եվ կովեց աննահանջ, անողոք, անղիջող,  
Չխնայեց արյունը, չխնայեց գնդակ:

Եվ ընկերները ընկան շտուչող դնդակից,  
Հետո ձյունը ծածկեց դիակները նրանց,  
Քամին վախով հեծեց, որպես մոլոր ֆաքիր  
Եվ մահը տարածվեց ցուրտ դաշտերի վրա:

Սոված, ստարոբիկ նրանք առաջ անցան,  
Նրանք արյուն տվին անսանձ ոխով լեցուն,  
Ճակատներին, քունքին կարմիր վերքեր ընծա—  
Մահը դաժան ու չտր, մահը աչքերով ցուրտ:—

Որ նայում էր ամեն կերճից ու անտառից,  
Որ վայում էր դաժան լայն դաշտերի վրա,  
Վայրկյանը մահու չափ ծանը ու մահառիթ  
Բախուը ամեն մեկի իր ճակատին դրած:

Եվ դիրքերից նոր դիրք ու ճակատից ճակատ  
Նվազում էր խումբը ու դոհեր էր տալիս,  
Անունները սակայն պայքարում հռչակած  
Եվ շուրջերում երդը փրկարար ու դալիք:

Պուրդան դաժան, պուրդան տայդաներում անծայլ,  
Հսկա քուլաներով ծածկում է ամեն պիծ,  
Զնջում մի վայրկյանում ճանապարհը անցած,—  
Պուրդան տայդաներում ու սարսավին ամենքի:

Ճերմակների բանդան թափառում է այստեղ,  
Պետք է հասնել նրանց ու հարվածել ուղիղ, —  
Ճերմակ հողմը սակայն կորցրել է ուղին,  
Հերոսների թափն ու էնտուղիադմը սաստել:

Ճարճատում են հոկա ծառերը արմատից,  
Կոտրատվում են, թափվում, մոնչում են ահեղ,  
Նրանք ճիգ են անում, տապալվում են զետին,  
Եվ քշում է հողմը, կորցնում է անհետ:

Եվ երեք օր հողմը տիրապետող եղավ,  
Եվ երեք օր վայեց անտառների վրա,  
Եվ երեք օր նրանք լուռ անձնատուր եղան  
Եվ երեք օր քաղցած մաքառեցին նրանք:

Չորրորդ լուսաբացին, երբ հողմը դադարեց,  
Ռախսան նորից խումբը հանեց ոտի,  
Մինչև վախճան տանել անողոք սլայքարը, —  
Ինչքան մարտիկների մահը լինի մոտիկ:

Նորից ճակատ-ճակատ ելան թշնամու դեմ,  
Նորից դոհեր տվին համառ ու անխորտակ  
Եվ նոսրացան նրանց շարքերը երկաթե  
Եվ ուժն իր դեմ տվեց ճերմակների հորդան:

Ոչ մի տեղից նրանք օդնություն չստացան, —  
Վերջին ուժը լարած գաղաղած թշնամին  
Մտել էր հողի խոր երակները բացած  
Եվ մղում էր անթեք արմիճների քամին:

Որոշված է, Ոչ մի նահանջ: Եվ թշնամու  
Գնդակների առաջ բայց են անում կրակ,  
Մահը գերանդում է աչքերով իր տամուկ  
Եվ գիտելներ թողնում խրամատների վրա:

Առաջ, առաջ... առաջ... Ուսիսան արի  
Քունքի վերքը բռնած կը խանդով, —  
Ել վերադարձ չկա կիսատ ճանապարհից,  
Ել փրկություն չկա թնդանոթից քանդող:

Ոչ ոք չհանձնվեց: Մինչև վերջին մարդը  
Նրանք պատվով ընկան խորաքանդ դիրքիւում.  
Ճակատները այն սեզ, հասակները պարթե  
Եվ շուրթերին երդը՝ փառավոր, աններում...

Ոչ մի շունչ չմնաց նբանցից կենդանի,  
Պատուիած դրոշակը արնոտ մահերգ լացեց,  
Երկը լուսաբացին մի խիզախ ընտանիք  
Իր մուգ արնով ճերմակ ձյան շեղջերը թացեց

Սակայն նրա մասին, այն դեկավար կնոջ —  
Բյուր երգեր կասլեցին, անմահ, ճերոսական,  
Որը կյանքը փրկեց իր արյունի կնով,  
Դասակարգի գործը պատվով տարավ սակայն:

Տայգաներում վայեց քամին հազար բերան,  
Դրոշները անթիվ ծառացան փրկարար  
Եվ երկրում տոնեց կյանքը մի նոր էրա,  
Խնդությունը հոսեց երակներում վայար...

Փառ իմ երգը մինչև գետին եմ ցած բերում,  
Խոնարհում եմ նբանց շիրիմների վըա, •  
Որոնք դասակարգի վրեժը բիրերում  
Փառքով ընդունեցին հազար մահ ու կըակ...

## Ա. Ա. ՊՈՒՇԿԻՆԻՆ

Դու կանդնել ես ահա հասակով անթերի  
Եվ ես քեզ եմ պարզել իմ զույգ ձեռքերը թույլ,  
Դու անվաս բոլոր մրրիկ ու շանթերից.  
Ողով բարձրաբարձր ու երգերով խնդուն:

Ես քո դեմ եմ հիմա իմ գլուխը թեքել,  
Այս, ես քեզ եմ նայում հիմա ակնածանքով,  
Չո պայծառ հասակին, որ իս դարը երգեց,  
Եվ մնայ սրտերում սելունդների անկոր...

Մենք հնձում ենք հիմա քո երգերի բերքը,  
Մեր ողու, մեր պայծառ սելունդների համար  
Եվ միշտ անսպառ է, անմեռ է քո երգը,  
Արևի պես կիզիչ ու նրա պես անմար:

Նորից քեզ ենք կանչում, գանդրահեր երգիչ  
Մեր պայծառ լույսի, մեր արեգակի ներքո,  
Որ նոր ուժ ու կորով տառ մեր մատաղ երգին  
Եվ մեզ ջերմացնես քո անկաշառ երգով:

Մեր երգերին բեր քո երգի խնդությունը,  
Որ ոչ մի հողմ նրա արմատը չբեկի,  
Արի, արի մտիր մեր երգերի տունը  
Եվ կըկանգնենք ոտքի մենք բոլորս մեկն...

## Է Լ Ե Գ Ի Ա

Կածաններ իմ, կածաններ, ուրախ գնում եք Մաշուկ,  
Սակայն մի խոր տխրություն ահա իմ սիրտն է մաշում:

Ես կանգնած եմ հիմա այս լիռան վրա պատմական,  
Շուրջս փոված անտառն է փառահեղ ու վեհաշուք  
Նա շարժում է թերը՝ կանաչ թիկնոցն իր հաղած  
Աչքով անում ու կանչում՝ դեպի իրեն է քաշում:

Կածաններ իմ, կածաններ, ուրախ գնում եք Մաշուկ:  
Բայց ինչու եմ ես տխուր, ինչ թախիծ է ինձ մաշում:

Դուք կանգնած եք, ով ծառեր, հարսանեկան հանդեսի,  
Մշտադալար, մշտապերճ, հավետ ուրախ, անաշուն,  
Ես մնում եմ զատ, անմաս ձեր տոնական հանդեսին,  
Շրջում եմ այս վայրերը հոգով, երգով տրտմաշուք:

Կածաններ իմ, կածաններ, ուրախ գնում եք Մաշուկ,  
Ես անցյալի հուշերով ահա իմ սիրտն եմ մաշում:

Ես անցյալի հուշերով տարվել եմ այս երեկո,  
Այդ է, այդ է, որ սիրտս քրքրում է ու խաշում,  
Ու քայլում եմ անտառի սաղարթախիտ եղերքով  
Մտքերի մեջ ընկղմված, գլխակոր ու անշառել:

Կածաններ իմ, կածաններ, ուրախ գնում եք Մաշուկ,  
Ես ձեր ուրախ շրջպարում տխուր մի հուշ եմ հիշում:

Մաշուկ, Մաշուկ, քո լանջում կտ մի տիուբը պատմություն,  
Մի սև եղեռն կատարված անցյալի սև մշուշում,  
Ես հիվանդ եմ այդ հուշից, այս, ինձ տարեք, տարեք տուն—  
Անտառ, գիրկդ բաց, անտառ, գթասիրտ ու հովաշուք:

Լելմոնտովի արյունն է թափված այստեղ, ով Մաշուկ,  
Այդ է սիրան իմ քրքրում, այդ է իմ սիրու մաշում:

Բավիղներն են ոլորվել հուշարձանի եղերքով,  
Ծաղիկները կազմել են մի տաղավար հոյաշուք,  
Հավքերի խոռո երանն է անցնում կապույտ երկնքով,  
Ճած է թափում վերեկից վկառությունները իր նախշուն:

Կածաններ իմ, կածաններ, ուրախ գնում եք Մաշուկ,  
Ել չեք տեսնի տիսրություն, Ել չեք տեսնի դուք աշուն:

Մաշուկ, Մաշուկ, հարազատ ձեռքդ ուրախ պարզիւ ինձ,—  
Ոչ մի պոետ այսուհետ էլ չի զոհվի քո լանջում,  
Ահա ինձնից ցըռում եմ և՛ արտմություն, և՛ թախիծ,  
Եվ պոետի անունը ուրախ երդով եմ հիշում:

Կածաններ իմ, կածաններ, ուրախ գնում եք Մաշուկ,  
Առաջնորդեք իմ երգին ձեղ պես ուրախ, զովաշուք

Պյատիգորսկ

1939 թ.

## ԲԱՐԻԿԱՌԻ ՎՐԱ

ՏԵՎԶԵՆԿՈՅԻՆ

Եվ նա շրջեց երկար այս ափերի մոտով,  
Ճերմակ մաղերի վրա զապալոժյան փոշին  
Դնեպըն էր հոսում զավոդների տոթով,  
Դնեպը ոստըոյը որպես շքանշան դոշին:

Թափառել է այստեղ նա երկար տարիներ,  
Ապստամբել, ելել տիրողների հանդեպ,  
Աղատության մասին անթիվ երգ հոլինել,  
Ետևում թողնելով կախաղան ու բանտեր:

Նա երկար նայում է ջրերին փրփրած,  
Եվ ուռչում է սիրտը ամեն քայլափոխին,  
Նա ինքն էլ դուրս եկավ, որ երկիրը փռիւ,  
Սակայն մնաց կառչած բարիկադի վրա:

## „ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

Քանաքեռի բարձունքնելում  
Ես փնտրում եմ քո տունը հին,—  
Երևանն է ցածում խորհում,  
Ինչպես նիւթած դեղեցկուհին:

Ալարատյան տոտղելի տակ  
Քո հայրենի գյուղն է քնած,  
Ճակատին առած լուսեղեն թագ  
Եվ այտելը խնդուն ու բաց:

Ահա այստեղ, այս անակում,  
Սալդարական բռնության մեջ,  
Հանճարովը քո կը ակուն  
Դու երկնել ես քո «վերքը» մեծ:

Իսկ քո շուրջը հողն է հեծել,  
Հրկեղ սիրտը Հայաստանի  
Իր վերքերն է քո դեմ բացել,  
Քեղնից հայցել սպեղանի:

Իսկ քո շուրջը հնչել է լոկ  
Հորովելը հայ գյուղացու,  
Որպես բռունցք, որպես բողոք  
Սարդարի դեմ ու աստըծու:

Քո դարավոր ժողովը ինքի  
Ըմբռստ ոգին էր քո մեջ վառ,  
Օրերում այն խիստ ու մթին,  
Օրերում այն դժնի, խավար:

Դու կալդացիր լեզվով անմեռ  
Հայաստանի սիրտը ցավոտ,—  
Քո դեմ հուզվեց սարդարը նեռ  
Ու բանակը ֆարաջավոր:

Քո դեմ հուզվեց... իսկ դու հպարտ  
Ճակտիդ փշա պսակ դրած,  
Ալակյաղի պես ձյունապատ,  
Ինչպես Մասիսը վեճապանծ,

Արգելքներով այնքան խլթին,  
Սակայն փառքով ուղիդ անցար,  
Եվ քո սլոյծառ ժողովը  
Շրթունքներին անմահացար:


\* \* \*

Ալդ հայացքով իմ սևեռուն  
Ես փնտըում եմ քեզ անդադար,  
Ա՛ի, ո՞ր ձորում, ո՞ր անտառում,  
Ո՞ր գետի մեջ հանդիստ դտար

Ի՞նչ է ծաղկում շիրմիդ հիմա,  
Ո՞ր քամին է օրոր ասում,  
Մի տարադիր եղբոր նման  
Ո՞վ է հիմա սիրտդ հուզում:


Ես տիրությամբ մի անսահման  
Քո կորսոյան երդն եմ գրում,  
Աստղերի տակ Արարատյան,  
Հայաստանի բարձունքներում:

2. *Calochortus Nuttallii* Gray  
var. *luteus* Gray  
Leaves few, slender, 1-2 ft. long,  
the basal ones 1-2 in. wide, linear,



ԽԱՐԵ  
ԲԱՆԱՏԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ





## Կ Ր Ե Մ Լ Ը

Այս կրեմլն է ահա...\*

Դարսերի դեմ, որպես անպարտելի վահան,  
Հաղթանակով փառքն ու վեհությունը պահած,  
Այս կրեմլն է ահա...\*

Այս կրեմլն է ահա ծանրորեն նստած,  
Շուրջը ժանիքավոր պարսպական պատեր  
իջած հողի կլճքին անհաղթորեն, վստահ:

Այս կրեմլն է ահա, դեմը հրապարակ  
Եվ բազմահարկ շենքեր, շուրջը ու կողերին,  
Որոնք ամուր, որպես անքակտելի պատվար  
Գրկել են կրեմլը, և հիմքը հողե իր:

Այս կրեմլն է ահա, որ նայում է հեռուն  
Շուրջը, դեմը, որպես ոգին ժամանակի,  
Որը դեռ առլրում է քարե հիմքով կայուն,  
Որպես դողանջ թափոված կրեմլական դանդից:

Այս կրեմլն է, հպարտ, վեր խոյացած,  
Հեռովում տանիքների անհարթ ֆոնին,  
Եվ երկինքը որպես լեղակազույն լաչակ  
Ալիքովում է դեմի կապույտ հորիզոնից:

Այս կրեմլն է դեմը քարակառույց տներ,  
Ֆասադներին դեմքեր՝ կենդանու, մարդկային,  
Որոնց ինչ որ վարպետ արյունով է հինել,  
Որոնք մնացել են անհողդող ու կայուն:

Որոնք մնացել են ու ապրել են դավել,  
Տիսել են ժաղտացող ու հողագույն ձեռքել  
Եվ քամին է նրանց շուրջն ու դեմքին պարել  
Եվ զանգերն են դեմից ինչ որ աղոթք երգել:

Երգել են լիաթոք՝ հայացքները Հյուսիս,  
Կմախքացած ձեռքի պալարների մասին  
Եվ որոնել են ինչ որ չեղած մի Հիսուսի,  
Որը աշխարհ պիտի դա հրե վեղարը ուսին:

Որ պետք է ելնե, կյանք տա մեռածներին,  
Հողագույն դեմքերին ուրախություն ցանի:  
Եվ մեծ օվկիանոսի վերի ծերից  
Տայգաները մինչև դրախտավայր անի:

Զանգերը երգել են, օրհնել են ժպիտով,  
Կամարներում կյանքն է դանգաղորեն հոսել,  
Որպես հոգսը դեմքին կնճիռներ է կիտում  
Եվ ձղում է ճակատին ինչ որ անհարթ շուեւ:

Եվ նայել է հոգսը մտքի լուսամուտից,  
Թափանցել է նա խոր, ուկորները մինչեւ,  
Ինչպես բուքն անողոք, ձմռամուտին  
Տայգաներում անսանձ, ահապնորեն հնչեւ:

Պարզել են ձեռները խատաներից անդին,  
Բուքը ոռնացել է հյուսիսային դոտում,  
Զյան շեղջերն են անտակտ պարել օդում,  
Ոռնացել սրտապայթ սառուցային խանդից:

Եվ կրեմլը, որպես անպարտելի կամար,  
Դեմ է տվել կուրծքը կատաղի հողմերին,  
Խոռոչներով, և՛ մութ, և՛ ամպամած,  
Հայացքել է շուրջը, — աշխարհի կողմերին:

Այս կրեմլն է ահա...

Դարերի դեմ, որպես անպարտելի վահան,  
Հաղթանակով փառքն ու վեհությունը պահած,  
Այս կրեմլն է ահա:

Այս կրեմլն է ահա դեմք հրապարակ,  
Եվ բաղմահարկ շենքեր շուրջը ու կողերին,  
Ռունք ամուր, որպես անքակտելի պատվար,  
Պաշտպահնել են նրան դարերի հողմերից:

Մի օր, Հոկտեմբերյան մի ցուրտ գիշեր, քամին  
Երբ բուքսիր էր առել ձյունը պլոշադի  
Եվ դարձրել նրան անընկճելի Պամիր—  
Դրոշները եւան կրեմլի ճակատից:

Ելան դրոշները հաղթ ձևոքերով բռնած,  
Ճակատներին, քունքին արյան բծեր,  
Քամին նրանց շուրջը փչեց ահազնաց,  
Փողոցների մայթը կատաղորեն ծեծեց:

Եվ առաջին անգամ այն պատերի դիմաց  
Հայացքներով ըմբռուտ նրանք միտինգ արին,  
Մինչև վերջին շունչը չդառնան պայքարից,  
Մինչև պատռեն ամեն արյունուշտ դիմակ:

Թնդանոթներն ելան կրեմլի խորշերից,  
Հայացքները հյուսիս, հարավ ու արեելք,  
Հաղարները ընկան արյունուտ մայթերին,  
Շրթունքներում վրեժի ու աղատության երգ:

Եվ կրեմլը նայեց հալարտ, հուզախոռվ,  
Երբ իր պատերի տակ փորվեց այնքան շիրիմ,  
Ռունք ընկան մարտում, որպես անպարտ հերոս,  
Երկրին, հողին, կյանքին աղատություն բերին:

Որո՞նք Ռազինյան օլերից մինչև էսօր  
Կյանք էին դարբնում, հողի ու երկաթի,  
Մինչև գիշերն իջներ ու ելներ Ծիրակաթին.  
Եվ երկնքի հունով դանդաղորեն հոսել:

Վերջին շողը փարվեց չերիմների քարին,  
Դանդաղորեն մեռավ պատերի խորշելում,  
Բանակը դառնում էր հաղթական պայքարից  
Դրոշները պահած կրեմլացած ձեռքելում:

Այս կրեմլն է ահա...

Դարերի դեմ, որպես անպարտելի վահան  
Հաղթանակով փառքն ու վեհությունը ոլահած—  
Այս կրեմլն է ահա:

Դեմի պլոշաղից հայացքները հյուսիս,  
Ասպետները Մինին-Պաժարսկու,  
Որ ձեռքերը մեկնած լուռ կրեմլն են հոկում  
Որպես անմար կոթող Մայր-Ռուսի:

Նրանք ինչեւ տեսան իրենց կանգնած օրից,  
Ասպետներն այդ խստիվ, քարե հայացքներով,  
Բանի ձեռք կամեցավ նրանց հիմքը փորի  
Վրեժի արյունը երակներում:

Բանի անդամ նրանց պատվանդանի առջե  
Սրերը բարձրացան իջան արյունոտված,  
Բանի դիակ անշունչ ցուրտ քարերին կառչեց  
Շրթունքներում հողի ու մայրենի բարբառ:

Եվ տարտօնեց քամին գրսում հյուսիսական,  
Փոշին ցրեց արնոտ դեմքից պլոշաղի  
Եվ երկը անծայր ու անպարտ ճակատին  
Դրոշմվեց մի բոռնցք, մի ամբակուռ մկան:

Կըկին կամարները, գմբեթները խոչած  
Եվ զանգերի տոթը ճակտուին Կըեմլի  
Եվ հիշում է նա իր սլատմությունը հաճախ  
Հին դարերից—մինչև Լենին:

Նայում են սլատերը և խրոխա, և դարական,  
Եվ թողնում են կըկին տարիները ետև,  
Ուստիս իրար ձուլված մի ամքակուռ փական,—  
Այս Կըեմլն է ահա—անպարտ ու հաղթական:

Այս Կըեմլն է ահա...  
Դարերին դեմ որպես անպարտելի վահան,  
Հաղթանակով փառքն ու վեհությունը սլահած,  
Այս Կըեմլն է ահա:

Այս Կըեմլն է ահա...  
Որ կյանքում մի անգամ ցնցվեց հիմքով քարե,  
Տները խորհում էին երբ դլխահակ,  
Որոնց դիմքին այնքան սուր հն փայլել:

Հենց դեմ ու դեմ, նրանց երկու ասպետների,  
Պղնձե փողերի ու սլատվանդանի առջե  
Դրոշներ կախվեցին Կըեմլի սլատերից:

Դրոշները, վրան ու երիդներ նստած,  
Մաղրլված ձեռքերում հոսանքի դեմ քամու,  
Սակայն երթն իջնում էր անվախորեն, վռտան,  
Խիում էին խանդով շեկ փողերը ամուր:

Թափորը իջնում էր քարած պլոշաղով,  
Առաջից ծառացած դրոշների անտառ,  
Կնճիռները ձգված նրանց լայն ճակատում,  
Որպիս անձեռազործ քանդակ:

Վիշտը մեծ էր նրանց, կոլուսան անդառնալի,  
Կրեմլի խորշերից կրկին թնդանոթներ  
Ահեղ որոտումով պատիվ էին տալիս  
Եվ հայտնում աշխարհին նրա մահվան բոխը —

Այն մեծ առաջնորդի, որը փոխեց կյանքում  
Հազարավոր օրենք դարերից սահմանած,  
Սիրիում, աքսորում դրեց, հուշեց անքուն  
Եվ բանակներ հանեց լանակի դեմ այն մաս:

Հողին էին հանձնում առաջնորդին իրենց  
Պղնձագույն մարդիկ, և քունքերին որոնց  
Հոկտեմբերը այնքան սպիներ էր դրել,  
Հայացնքներում կոփել անհատնելի կորով:

Պահակը պահում էր պատվով հրացանը,  
Կրեմլի խորշերից ձյունն էր ահեղ սուբում,  
Նա շնչում էր թեալետ կապարի պես ծանր,  
Բայց քայլում էր նա վեհ անմար հուրը սրառում,  
Սակայն սրտում ուներ պահած մի խոր երդում,  
Մէջ խոր հավատ ուներ դեպի առաջնորդը:

Եվ կրեմլը տեսավ նրա մահը ահեղ,  
Թափորները մարդկանց անվերջ, անհուսահատ,  
Եվ իր հայացքներում մի պարտություն պահեց,  
Ուր մնում է դեռ այս քարերին ահա:

Մարդիկ արնով ներկված դրոշ էին տանում,  
Ուր պայքարում լինեն մարտիկ ու աննահանջ,  
Ուղեղներում որոշ մի Մեծ մարդու անուն,  
Որի գործն են որպես դեպիդ տանում ահա.

Նայում են պատերը և՝ գորշ, և՝ դարական,  
Եվ թողնում են կրկին տարիներ ետև,  
Որովհա իրար ձուլված մի ամբակուռ փական—  
Այս կրեմլն է ահա, անպարտ ու հաղթական:

Այս կրեմլն է ահա...

Դարերի դեմ, որսկես անպարտելի վահան,  
Հաղթանակով փառքն ու վեհությունը պահած,—  
Այս կրեմլն է, ահա:

Մասկով

1932 թ.

## ՀԵՐՈՍՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐԻՑ

Վերջացավ, Այս զիշել ես առլեցի նորից  
Ընդվզումի ըմբոստ տարիները։ Նորից  
Պայծառ առավոտ է։ Ես հիշեցի նրանց,  
Որոնց մասին չունենք մենք ոչ մի իրու գրած,  
Ես անցկացրի անքուն այս զիշելը ամբողջ,  
Ես հիշեցի նրանց, որոնք հիմա չկան,  
Որոնք, երկիր, քո սուրբ ու լայնածիր դաշտում  
Զոհվեցին անմոռունչ։

Պայծառ առավոտ է,  
Արել պատռել է հորիզոնի կուլծքը,  
Եվ լվացված ելել ծովի ալիքներից,  
Եվ շողելը ազատ, ճաճանչները լուսի,  
Փռել է մեր երկրի ու լեռների վրա։

Արել սրբազն ողողել է արդեն,  
Ռսկեզօծել խսկառ մեր հողը, մեր դաշտը,  
Մեր դյուզելը համայն, քաղաքները մեր մեծ,  
Շինքելը մեր հոկա, փողոցները հստակ,  
Եվ դեմքերի վրա՝ մեր երկրի ազատ, —  
Խնդություն է ցանել... Օ՛, առավոտ ոլոյծառ,  
Օ՛, կենսառու արե, մեր երկրի, հողի,  
Համայնական դաշտի ու արտելի վրա։

Ակերջացավ։ Այս գիշեր իմ ուղեղի կապույտ  
Ու ջինջ հորիզոնից նորից անցան նրանք,  
Նորից անցան նրանք խիղախ հայացքներով,  
Հերոսության այն վեհ տարիների միջից,  
Պայծառացան նորից իմ հուշերը անթիվ  
Հերոսների մասին...

### Հերոսների մասին...

Ես հիշեցի նորից այն ցուլտ տարիները,  
Քաղցի ու մերկության, և' տիֆի, և' մահի,  
Արյան ու արձիճի, և' զոհերի անթիվ  
Տարիները, Նորից իմ սիրտը կրակվեց  
Հյուժի այլառնով... Օ՛, տարիներ մահի...

Վերջացավ։ Այս գիշեր  
Ես թերթեցի նորից անթիվ արնոտ էջեր,  
Հերոսական էջեր—անթիվ խիղախ դեմքեր,  
Նորից իմ դիմ ելան պայծառ ու կենդանի  
Եվ քայլեցին, երկիր, քո դաշտերով անծայր,  
Կրկնակի զոհվելու...—Եվ ինչքան հերոսներ,  
Եվ հայտնի, և' անհայտ, զոհվել են կրկնակի,  
Բեղ համար, քեզ, երկիր...

Նրանք դուրս են եկել հանքից, դուժաբանից  
Եվ շարժվել են նրանք մեր դաշտերով անծայր,  
Եվ դրոշակներ են բարձրացրել կրեմիի վրա,  
Մահվան թերի տակ ձյեռայինն առել...  
Նրանք դուրս են եկել Պուտիլովից հսկա,  
Նրանք դուրս են եկել Բաքվի վիշեներից:  
Նրանք դուրս են եկել հսկա դեպոներից,  
Նրանք դուրս են եկել Դոնբասի շախտերից,  
Նրանք դուրս են եկել Դոնից, Սարտովից,  
Նրանք դուրս են եկել Սիրիրից լայնածիր,  
Նրանք դուրս են եկել առանձին, խմբերով,

Վաշտերով, գնդերով, բանակներով անթիվ,  
Լեղիոններով ամբողջ, իրենց աղաւառվծյան  
Եվ, երկիր, քո հողի ու քո ջրի համար:  
Եվ զոհվել են նրանք կրեմլի պատերի տակ,  
Հսկա Պուտիլովի դարբասների առաջ,  
Նեայի ափերին, Դոնքասի շախաերի  
Եվ գործարանների խոնավ հատակներում,  
Նավթային աշխարհում, և Մետեխի բանում,  
Եվ Անդրկառաջան գորշ ավաղուտների վրա  
Նրանց կարմիր արյան շիթերն են մնացել:

Նրանք գրոհել են Պելիկոպը դաժան,  
Նրանց ոսկորները հանդչում են ջրի տակ,  
Նրանք լայն Ամուրի ափերում են ընկել,  
Նրանց ալիքներն են թաղել իրենց գրկում,  
Ուրալ գետն է նրանց սուզել իր ջրերում,  
Նրանց տայզանների ահոելի պուրզան է  
Ծածկել սյուների տակ:  
Նրանց դլխատել են Մանթաշի վեշերին,  
Նրանց վայր են ձգել Տաթևի ժայռերից,  
Նրանց գնդակել են խմբերով, առանձին—  
Սիբիրի լայնարձակ ու ցուրտ տափաստանում,  
Սիվաշի ջրերում, հեռու Ալեկելքում,  
Գնդակել են նրանց, թաղել են կենդանի—  
Տըիպուի արնոտ ավազների գրկում,  
Հոշոտել են դաժան, կախել են ծառերից,  
Սյուներից, պատերից, անդամախեղ արել—  
Որ քո երթը, երկիր, հավիայան խանգարեն...

Սակայն վերջին մարդը, վերջին գնդակով իր,  
Զի նահանջել գիրքերից, իր կուրծքն է բացել,  
Նա թշնամու առաջ, իր արյունն է թափել  
Նա մեծ զործի համար... իր գլուխոն է դրել  
Մահվան հողմերի տակ, իր արնակից ու քաջ

Եղբայրների կողքին,— վաղվա կյանքի համար  
Առաջնորդել է մեղ այդ ահեղ պայքարում,  
Մեր դարավոր իղձերի ընթացքն է վարել,  
Այն հանճարը, այն մեծ կոմանդորը, այն մեծ  
Մարզակեն իմաստուն, որը պայծառ տեսավ  
Մեր դալիքը լուսե, և երկիրը տարավ  
Անթիվ վտանգներից խիղախորեն դեպի  
Պայծառ, պայծառ ափեր...

Օ՛, մեր զեկավարներ, դորավարներ անմահ,  
Ուր դուք պայծառ տեսաք մեր դալիքը լուսե,  
Հաղթությունը մեր, որ գուշակեցիք դուք վաղ  
Եվ մեղ տարաք մարտից, վտանգներից անթիվ,  
Կրակի, բոցերի ալիքների միջից  
Դիակի ափեր լուսե,—  
— Զեղ եմ փառաբանում,  
Եվ քեզ, երկիրի հզոր, իմաստուն զեկավար,  
Եվ ձեզ, որ զոհվեցիք այս լավ կյանքի համար...

\* \* \*

Ես թերթում եմ հիմա այս հուշերը մեկ-մեկ  
Այդ էջերը անցած, բայց փառավոր ու վեհ,  
Տարիները այդ խիստ դաժան ու փրկարար  
Տարիները անմահ, և սիրոս լցվում է  
Վրեմի այլունով, կուտակվում է հիմա  
Իմ երակներում վրեմի հուրն անմար:  
Վերջացավ: Բայց դալիք ահեղ պայքարներում,  
Եվ մեր ապագայի անթիվ մըրիկներում,  
Մենք ձեզ երգ կդարձնենք, դրոշներ կդարձնենք  
Կկռւտակենք նորից, կրկնակի, կըկնակի,  
Զեր սրբազն ու վեհ ուղմական ողին...

Եվ կտանեն նորից անսայթ ուղիներով,  
Զորսովարները մեր կովոված, պայծառատես,  
Խիղախ և իմաստուն, — մըրիկներից անթիվ  
Դիակի պայծառ ափեր:

## ՄԱՐԴԱԼ

Զուրն է հոսում ստեղով, քամին է ոլարում,  
Կապույտ ամպերն էլ արդեն խփում են կայծակ, —  
Հոկտեմբերից լավ անուն չկա աշխարհում,  
Այն, որ եկավ մայիսից ավելի պայծառ:

\* \* \*

Եմ գեմ բացվում են գյուղի դաշտերը հունիսի,  
Ստեղները լայնածիր, առուները ջինջ,  
Քեզ եմ տեսնում ես նորից, ստեղի որդի,  
Ռտարորիկ, կիսաքաղց, աչքերով վճիռ:

Մանուկների գյուղական դու սլարավլութ,  
Դու կրակն ու շարժողը խաղերի ուրախ,  
Միրում էիր տերերին չլինել հլու,  
Միրում էիր ձի հեծած քամու հետ սուրալ

Աչինչ, ոչինչ չեր ընկճում քո կայտառ հոգին,  
Աչ տերերի մարակը, ոչ քաղց ու կարիք,  
Ազատությունն էր դարձել սրախիդ թագուհին,  
Զինակիցդ անբաժան ու հավատարիմ:

\* \* \*

Հոկտեմբերից լավ անուն չկա աշխարհում,  
Այն, որ եկավ մայիսից ավելի պայծառ, —  
Զուրն է հոսում ստեղով, քամին է ոլարում,  
Կապույտ ամպերն էլ արդեն խփում են կայծակ:

Դու էլ կայծակ խփեցիր, հեծար սեգ ձիուն  
Ալշավեցիր սըամերկ ու տրծվատես,  
Ժողովուրդը քեզ զինեց, տվեց քեզ անուն,  
Ռւզարկեց, որ երկերն ու կյանքը պաշտպանես:

Եվ տեսնում եմ քեզ ահա սեգ ձիուն նստած,  
Յարիցինի հաղթական ամրոցների տակ,  
Դաստիարկիդ անսպառ ուժերին վստահ,  
Կարմիր դնդերն ես մղում դեպի հաղթանակ

Ալշավում ես առաջից՝ անահ, սրամերկ,  
Ճերմակների հորդան ես ճզմում անխնա,—  
Դու պահել ես միշտ բարձր դրոշակը մեր,  
Պարտությունը քո դուռը չի բախել բնավ:

Ու քո կողքին կանդնած էր զորավարը մեր,  
Ածխահատը Դոնրասից, պարթեահասակ,  
Ռըին քեզ սկս հաղթական թերե պարզեց  
Ժողովուրդը,—Նրան էլ դարձրեց անսասան:

Ստալինն էր քո կողքին, մեծ ու անրասիր,  
Ռազմական անսպառ կը ակու անշեց,  
Ռը իր հետ ըերել էր վեհությունը կովկասի,  
Ազատաբազմ իր երկը սերն ու սիրու մեծ:

Ու կենինն էլ կրեմլից քեզ թե էր տալիս  
Ռւզարկում էր քեզ խոյանք,—Ծշնամուն նետեր,  
Զդիմացավ քո ուժին ոչ մի խոլալիք,  
Զդիմացավ, քանզի մեր ժողովուրդը քեզ հետ էր:

Դու պահել ես միշտ բարձր դրոշակը մեր,  
Պարտությունը քո դուռը չի բախել բնավ,  
Ժողովրդի—քեզ տված—անհաղթ սրով մերկ  
Հորդաներն ես թշնամու ճզմել անխնա:

\* \* \*

Իմ երկրից լավ անուն չկա աշխարհում,  
Որ ծաղկում է մայիսից ավելի պայծառ,  
Զուըն է հոսում ստեպով, քամին է ոլարում,  
Ու գորշ ամպելն էլ արդեն խփում են կայծակ:

Թշնամին է մեր հողին մոտենում թաքուն,  
Բայց պատրաստ է նորից ձիռ սույլ ու հողմաթե,  
Քո ուժին չի դիմանա ոչ մի զորագունդ,  
Չի դիմանա, քաղնի մեր ժողովուրդը քեզ հետ է:

## ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Եթե մեռնելու լինես, մահից քեզ չի փրկվ  
Ոչ մի զորեղ ձեռք, ոչ մի կարող բազուկ,  
Քանի կենդանի ես՝ զրիր երգեր բազում,  
Հետո մահը թող դա, իր թևերով զրկի...

Գրիր կյանքի մասին, սիրո մասին զրիր  
Եվ երկրի մասին մեր զիռ երիտասարդ,  
Կարոտդ թող հոսի, որպես վազքը ջրի  
Եվ բարձրանա, աճի մի անկաշառ հասակ...

## ԵՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՄԵՆԻՑ ՇԱՏ

Ես աշխարհում ամենից շատ ձյունն եմ սիրում Արարատյան  
Եվ այդիներն Արարատյան կքած մըզի ծանրության տակ,  
Եվ ճամբարները մոռացված իմ հայրենի հեռավոր տան,  
Որտեղ անփութ անց է կացել մանկությունը իմ կապուտակ:

Ես աշխարհում ամենից շատ երգն եմ սիրում Արարատյան,  
Եվ հորովելը հայկական լուսնակ ու պարզ գիշերներում,  
Եղերքները մեր Երասխի օծված շաղով բիլ վաղարդյան,  
Թռչունների խուռն համերդը մացառներում ու թվերում:

Մասիս լեռան ստորոտում ընկած է գյուղն իմ հայրական,  
Եվ հեծում է ճիւաններում որդեկորույս, անմիխիթար,  
Ես սիրում եմ քո արցունքը, քո հարցմանքը, հույզ այնքան  
Մալասումը քո անհանդիսա՞ աղատության դու սիրահար:

Ես ձեռքերս պարզած առաջ, ինչպես փրկիչ, ինչպես զավակ,  
Իմ կարոտի մասին եմ այս ընդլառումի երդը դրում,  
Ես սիրում եմ ամենից շատ Արարատյան արելը տաք,  
Եվ դրոշը մեր կալմքածուկի Մասիս լեռան բարձունքներում:

## ՊԱԼԱԿԸ

Թող Դոնը վարարի, ելնի իր ափերից,  
Վոլոգան անշիղ թափովի կառալիական ծովը,  
Դնեպրը ցառկոտ պառողները քերի  
Եվ Դըիմը շոյի դույդ ծովերի հովը:

Դու քիչ ես ջանացել, հիմա ավել եռանդ,  
Ավել կալորիաներ քրտնքի ու տառի,  
Ամեն աճին երկըիդ դու եռանդով եռա  
Եվ երկըիդ համար դու արյունդ թափիիր:

Դու տասներկու թվի ծնված լանակային,  
Հրացանը ձեռքիդ խորաքանդ դիրքերում,  
Սովետական անեղբ սահմանները հսկիր,  
Կովկաս դու անռասան, ընկեր դու աններում:

Թող քեզ դիրք դարձնեն ընկերներդ մարտիկ,  
Թիկունքիդ վրայով դնդակները ոռնան,  
— Ռդջույն մեր դալիքի, մեր վերջնական մարտին  
Արյան հաղթանակով դրոշներին հառնած:

## ԴԵՊԻ ՈՒԿՐԱՆԱ

(«ԴՆԵՊՐ» ՊՈԵՄԻՑ)

Սրեց բարձրացել է հորիզոնից բարձականի,  
Գնացքը կտրում է Ռւկրախնայի լայնությունը,  
Եվ անցնելով ինչ որ փոքրիկ թռւնել  
Երեաց փրփրաբաշ ու խենթ գոտին տափաստանի:

Հետպհետե մոտենում է դնացքը քաղաքին,  
Եվ ծխնելույլները արդեն դառնում են որոշակի,  
Ռոնց վիթխարաշուք հասակից ահադին  
Ռւզում է սիրադ թռիչքով անսանձ աղաղտկի:

Գնացքը սուլեց և աղմեկելով անցավ կամուրջը,  
Դնեպրն իր ճերմակ բաշը օրորում էր ներքի,  
Ռի մրա Սասյուրան զլել է այնքան երդեր,  
Շեշենկոն այնքան զայրույթ է կուտակել իր շուրջը:

Որի ափերին հյուսվել է „Զապորոժեց զա Դուհամ“  
Եվ կաղակների սրերն են իրար արյունոտել,  
Անաղմուկ հոսում է սանձված արդեն զետը  
Եվ մարտենը քեզ մետաղե հայցքով նայում է:

Կառավերները նայում են բացված խոռոչների նման,  
Դոմիաներն են հսկա երախները բացել,  
Բարձրացնող կրաններն ահեղ ու երկայնաձեռ  
Տալիս են շրջապատին նոր վայլ ու հմայք:

\* \* \*

Թոն է գալիս, ծառն է գողում,  
Գարնան թոն է, գարնան թոն.  
Երթամ սերմեր զցեմ հողում,  
Գարնան թոն է, գարնան թոն.

Արևն ելավ, շոգ է դաշտում,  
Ամռան շոգ է, ամռան շոգ,  
Քաղենք հացը... ծեծենք կալում,  
Ռւտենք ուրախ ու անհոգ:

Դեղնավ տերեկ, իջավ աշուն,  
Մրգահաս է, մրգահաս,  
Դաշտն ու այդին դառնան նախշուն  
Ինչ երազ է, ինչ երազ:

Յուրատ է դրսում, ձյուն կմաղի,  
Հոյ ձմեռ է, հոյ ձմեռ.  
Երթամ ինձ տամ քեֆի, լսղի,—  
Չունեմ հոգս ու չունեմ բեռ:

## ՄԱՆԿԱՆ

Ինչպես ջուրը գետի էլ ես չի բարձրանում,  
իմ լավ մանուկ, իմ լավ մանուկ,  
Այդպես օրերը մեր երթեք ետ չեն տանում,—  
իմ լավ մանուկ, իմ լավ մանուկ:

Շողշողում է հողը, համայնական, հանուր,  
իմ լավ մանուկ, իմ լավ մանուկ.  
Արևի տակ հղոր, պայծառանուն。  
իմ լավ մանուկ, իմ լավ մանուկ:

Դու զարթնում ես հիմա առավոտը կանուխ,  
իմ լավ մանուկ, իմ լավ մանուկ,  
Թռթովում ես անքառ ու ձեռքով ես անում,  
իմ լավ մանուկ, իմ լավ մանուկ:

Հին կյանքն է քո շուրջը պայքարով մահանում,  
իմ լավ մանուկ, իմ լավ մանուկ.  
Այս նոր կյանքը, ախ, քեզ ինչ բարձունք է՝ տանում  
իմ լավ մանուկ, իմ լավ մանուկ:

Ախ, իմ հրդն էլ քեզ պես ու քեզ պես ըարձրանուն  
իմ լավ մանուկ, իմ լավ մանուկ,  
Այս լավ օրերի դեմ թող չլինի անուժ,  
իմ լավ մանուկ, իմ լավ մանուկ:

Արեի տակ այս վառ, հզոր պայծառանուն,  
իմ լավ մանուկ, իմ լավ մանուկ,  
Ախ, մեծացեք մեկտեղ, պայծառանուշ,—  
իմ լավ մանուկ, իմ լավ մանուկ:

## Զ Ա Ն

Ուկրաինական լայնության, Ուկրաինական երկինք,  
Դնեպրը քո մեջքին որպես դոտի...  
Քո շախտերին, դոմնաներին երդն իմ  
Եվ ողջույնս երկտթափայլ առավոտից:

Ողջույնս դաշտերիդ ու արտերիդ հասուն,  
Շախտյորներիդ երթին՝ և վիճ, և փառավոր,  
Որոնք աշխատանքի երդն են մկաննելով հյուսում,  
Պոեմներ են գրում վաստակի ծարավով:

Որոնք ուսերին տանում են մի վրառավոր ներկա,  
Պատվի գործն է նրանց մղում աշխատանքի,  
Դնեպրը ձզվող քո դաշտերով երկար  
Եվ Դնեպրոգեսը՝ ձեր վաստակը անգին:

## ԳՆԱՑ ՍԱՐՈՎ ԻՄ ԵՂՆԻԿԸ

Գնաց սարով իմ եղնիկը  
Մոտես գնաց ինձ չտեսավ,  
Աչքը ջինջ էր հանց երկինքը,  
Խռոքը շուրթին, ինձ խոսք չասավ։

Պաղ ջուր խմեց աղբյուրի մոտ,  
Բույլով լցընց ալտ ու ալոտ,  
Սիրտս վառեց, թողեց կարոտ,  
Զեն ածեցի՝ ձեն չհասավ։

Խռով գնաց եղնիկս էսօր,  
Ինչպես ամուսն կիզիչ կեսօր,  
Ես հալվեցի սրտով բռոր  
Ցողի նման խոտերին թավ։

Ա՛յս, քեզ էլի ես յալ կասեմ,  
Ամեն շշուկ, ձեն կլսեմ,  
Աղբյուրի մոտ դեռ կսպասեմ,  
Գուցե ետ դա եղնիկն իմ լավ։

## Կ Ա Ր Ո Տ

Զյունը նստում է ծառերին ու տանիքներին,  
Ծխնելույղներից ելնում է կապույտ ծուխը,  
Հետո գիշերն է ծանրանում՝ և՛ սի, և՛ ածուխն  
Եվ ուղում է գետնից ամեն լույս, շող քերի:

Այնժամ լույսն է վառվում քո պատոհանի  
Եվ ճերմակ վարակույլն իջնում է դանդաղ,  
Ես մոտենում եմ արդեն փողոցներով հանդարտ  
Պատոհանիդ...

Ես գործից եմ գալիս՝ ծանր, հոգնածորեն,  
Յուցամատով հազիվ խիռում ապակուն,  
Ճակատից իմ քրտինքն է առուտու ծորել,  
Սակայն քեզ հիշել եմ իմ հույզերում թաքուն

## Ն Ա Մ Ա Կ

Կապույտ ծուխն է ելնում ահա վեր,  
Բամին քո մազերն է անողոք ցըռում,  
Դու դարձել ես ճիմա ինձ համար զըռոյց  
Այնպես մտերիմ, հարազատ ու վեհ:

Չյունն է արդեն նստում կատարներին  
Եվ անցած դարունը է լ ե՞րբ կդառնա,  
Սիրելի բարեկամ այս անդամ ինձ ներիր,  
Եթե հեռուներից ես չվերադառնամ:

## ԱՆՁՆՎԻՐՈՒԹՅՈՒՆ

Արվարձանների վրա նստում է դեղին ոսկի,  
Երբ արևը ելնում է լայնարձակ հորիզոնից.  
Դու փնտրում ես լեռներ գեղեցկադույն խոսքի  
Եվ տերմիններ անմահ չանհետացող ձռնի:

Դարը տվել է քեզ եռանդ, ձիքը անհատնում,  
Եվ կյանքի մեջ քո նոր, մի էջ է վեր հանել,  
Ինչ որ ունես ալահած, այս կյանքին տուր,  
Որ երկրիդ դրոշակը վեհությամբ տանես:

## ՆԱՄԱԿ

Աղջիկ իմ, քեզ նամակ  
Զինվոր այն տղայից,  
Որի երդի համար՝  
Եվ նուրբ, և չղային  
Դու դիշերը լացիր  
Կասլույտ արտասուքով  
Եվ թախծեց ակացին  
Բո պատուհանի քով:

Նա դինվոր է հիմա՝  
Եվ երկիրն է սլահում,  
Դու, աղջիկ իմ քռմայթ,  
Ամեն հարմար սլահուն  
Նախառում ես նըան,  
Որ շուտ վերադառնա  
Եվ կոսկերիդ վրա  
Արցունք չերեա...

Վաղը արև կանի,  
Իմ գարնան ծիծեռնակ.  
Եվ հեռու սահմանից  
Լովերադառնա նա...  
Վաղը կդա կըկին  
Երկրի սլահակն արթուն,  
Քեզ նուրբ, նուրբ կորկի, —  
Կժպտաս դու...

Այժմ միայն նամակ  
Զինվոր այն տղայից,  
Որի երգի համար՝  
Եվ նույը, և զղային  
Դու դիշերը լացիւ  
Կապույտ ալտասուքով  
Եվ թախծեց ակացին  
Քո պատռհանի քով:

## ՃԱՄՓՈՐԴԸ

Եվ լուսինն էր ինձ ուղեկցում,  
Ճամփաներով ոլոր, երբ քայլում էի  
Եվ աչքերն իմ քաղցից մարում էին,  
Իսկ մեկը հայում էր չոր ու կծռ,

Ճամփան երկար էր, ծուխն էր չոքում  
Հորիզոնի վրա անափ,  
Սակայն խնդությունն էր կուտակված իմ հոգում  
Եվ կանչում էր հեռվից մի երկաթե շչակ:

## ԽՐԱԽՈՒՍԱՆՔ

Առավոտից առավոտ  
Եվ գիշերից գիշեր,  
Երդիր երդդ փառավոր  
Ու հավատով անշեղ:

Լցված կյանքի քաղցրությամբ,  
Հարազատ քո երկըին,  
Ոչ մի, ոչ մի քուլա ամակ  
Թող մտքիդ չիջնի:

Դու որբ էիր, մանուկ,  
Հիմա երդով աճած—  
Լցված գործին հանուր,  
Մել արնով նվաճած:

Եվ դիշերից գիշեր  
Առավոտից առավոտ,  
Դու հավատով անշեղ  
Երդիր երդդ փառավոր:

## Հ Ա Ւ Շ Ե Ր

Քսան տարին մարդու երբ թռչում է արագ,  
Երակներում արյունն է եռում ահաղնորեն,  
Ալտերում խշում է ոսկեզույն ցոլեն  
Եվ ծառերն են շըշում ջրերի վրա:

Է՞ս, սիրել եմ ես քեզ մի օր դալնամուտին,  
Երբ արեն է նայել ձյունոտ լեռան ուսից,  
Այս ջրերի կողքին, այս ծառերին մոտիկ,  
Մենք բացել ենք իրար և՛ սեր, և՛ սիրու:

Հիմա ձյունն է նստել: Քո հասցեն ուր նայեմ,  
Եվ ոչ մի հեռախոս քեզ չի դանգահարի,  
Ինչքան էլ հուշերն այն իմ սիրու հմայեն  
Եվ խոսքերդ հնչեն մեղմ ու բարի:

## ԹՈՂ ԼԻՆԻ

Թող լինի, կյանքից չեմ հըաժարվել,  
ի՞ւ, քիչ զերեկով կային մեր առաջ,  
Որոնց մենք երեկ արյունով առանք:

Ինչո՞ւ այսօր հեշտ թշնամուն տրվել,  
Քանի որ նորից կարող ենք կռվել,  
Կարող ենք առնել նոր դիրքեր արագ...

## ԴՐՍՈՒՄ ԶԱՆՁՐԱՇԵՆՏ

Վ. ՍԱՍՅՈՒԹԱՑԻՆ

Դրսում ձանձրաշենտ երգում է քամին,  
Հողմն է սկսել կատաղած սուրալ.  
Ողջույն հեռավոր ընկեր Սասյուրա...

Քո երկրում եղա մի քանի ամիս  
Եվ տեսա ինչպես քեռի Շևենկոն,  
Երգեր է կոփել իւր հատու դենքով:

## ԵՍ ԵՐԱԶՈՒՄ ԵՄ

Վ. ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒՆ

Ես երազում եմ այդպիսի հանճար,  
Ես երազում եմ արմավենու հասակ,  
Ել գլխավորին, որ իր խոսքն ասաց,

Ամպլոպի նման ահեղ ու ազդու,  
Որ սեղունդների սրտում կմնա,  
Որպես արել՝ չի մեռնում ընալ...

## ՄԱՅՐ ԱՐԱՔՍԻ ԱՓԵՐԻՆ

Մայր Արաքսի ափերին  
Ուռիներն են կռացել,  
Ուռիները օրորուն,  
Մայր Արաքսի ափերին  
Շատ եմ նստել ու թախծել  
Իմ մանկության օրերում:

Իմ վաղամեռ մանկության  
Խոր կարոտն եմ ես թախծել  
Իրիկունից մինչ արփին,  
Իմ վաղամեռ մանկության  
Անհետ կարոտն են լացել  
Ուռիները դետափի:

Պսակել եմ ճակատս  
Արարատյան ծաղկունքով,  
Հաղարաշվի ու փարթամ,  
Պսակել եմ ճակատս  
Արարատյան դարունքով  
Ու քրտինքով ջինջ, արդար:

Նվիրական Արաքսի  
Զբերում եմ լողացել,  
Օձել նրա ցնցուղով,  
Նվիրական Արաքսի  
Պարզությունն եմ գողացել  
Մի մանկական երկյուղով:

Արդ մի դետ է ըաժանում  
Ինձ մանկության օրելից,  
Իմ հեռավոր մանկության,  
Արդ մի դետ է ըաժանում  
Ինձ մանկության օրորից,  
Որ թախծու էր անսահման:

Եվ ես հայացքն իմ հառած  
Քո սրբազն ջրերին,  
Խորհում եմ լուս, աներել,  
Եվ ես հայացքն իմ հառած  
Իմ մանկության օրերին,—  
Զեղ եմ փնտըռում, ընկերներ

Զեղ եմ փնտըռում, որ չկաք,  
Խաղընկերներ իմ անգին,  
Մտերիմներ իմ տխուր,  
Զեղ եմ փնտըռում, որ չկաք,  
Որ մեռաք սև զրկանքից,—  
Եվ չդիտեմ, ախ, երբ, մւր:

Գուցե ընկաք դուք անօդ  
Գաղթի երկար ճամփեքին,  
Մտերիմներ իմ այնքան,  
Գուցե ընկաք դուք անօդ  
Ճրտի ձեռքից անմեկին,  
Կամ ձեղ ճանկեց սով արքան:

Ա՛խ, քչերին վիճակվեց  
Տեսնել արփին փրկության,  
Հասնել բախտի կատարին,  
Ա՛խ, քչերին վիճակվեց  
Հաղթել սովին, դառնության,  
Կտրել ճամփան դժվարին:

Այդ քչերից եմ ես էլ,  
Որ կանգնած եմ աներեր  
Նոր աշխարհի նոր շեմքին,  
Այդ քչերից եմ ես էլ,  
Իմ լավ, կորած ընկերներ, —  
Չայնում եմ ձեզ տիմբագին:

Լսեք ձայնն իմ, ով որ կաք,  
Եկեք տունն իմ, հյուր ինձ մոտ,  
Զեղ կընդունեմ գրկաբաց,  
Լսեք ձայնն իմ, ով որ կաք  
Այս շողշողուն առավոտ  
Խնդությունով շաղաթաց:

Մայր Արաքսի ափերին  
Կանգնած այսպիս դիմաբաց,  
Երդս ձեղնով է տարվում,  
Մայր Արաքսի ափերին  
Ջրաբրունքից լուռ ու թաց  
Ռւրիներն են օրորվում...

Ալիքներն են վետվետում,  
Դարավանդով ու կիրճով  
Խայտում, գնում մինչև ծով,  
Ալիքներն են վետվետում  
Նվիրական քրքիջով,  
Նվիրական ղնդոցով:

## Հ Ա Խ Շ

1.

Այս կողմերում մանկությունն եմ ես իմ մաշել,  
Եվ սուլել է դրսում քամին հազարաձայն,  
Մեր տնակը հողմի բերան ընկած տաշեղ  
Եվ մեր կյանքը արհավիրքով մի լուռ կածան:

2.

Այդ կածանով մենք քայլել ենք անհանգրվան,  
Եվ հողմերը մեզ տարել են անառադասութ,  
Եվ տքնել ենք օրենքների տակ չգրված,  
Եվ տերերի խարազանի տակ չար, առահ...

3.

Ո՞նց չքացան, այդ բոլորը անդարձ անցան,  
Եվ տնակը մեր ազատվեց արհավիրքից,—  
Պայծառ լինի հիշատակո, պայծառ, պայծառ,  
Աղատարանը դու մեր հացի, հողի, կյանքի:

## ՔԵԶ ԱՍՈՒՄ ԵՄ...

Քեզ ասում եմ՝ հիմնականից մի հեռացիլ,  
Երդիր քո երգը, դնա առաջ,  
Եվ այն կյանքը, որ դու արնով առալ,  
Այն կյանքը մի երդիր դու բառացի,  
Այլ հասկացիլ նրա պայքարն ամենօրյա  
Եվ արյունը թափած այն անկորուստ,  
Բող կոշտ լինի երգդ, մուրճով լինի դրած,  
Եվ երկրիդ աճումը քո երգերում:

## ԵՍՉԵՄ ՄՈՌԱՆԱ

Ես չեմ մոռանայ քո ծխախոտի  
Ծխի քուլանելը օղակ-օղակ,  
Եվ այն տարիները մեր ետևում թողած,  
Որ մայրը եղան այս առավոտի,  
Եվ մենք ողջունեցինք երդով մետաղական  
Այն երկաթե ձեռքին, որը տարիների  
Զայրույթն ու թախիծն իր սրտում հավաքած—  
Կարմիր խնդություններ բերեց մեր սրտերին:

## ՏԱՂԵՐ ՆՈՐ ՏԱՐՈՒ

Ա.

Այս տարին էլ թողիք ետև,  
Մտար մի նոր ոսկեցրջան,  
Եվ քայլելով խիզախ, թեթև  
Մտար մի նոր ոսկեցրջան.  
Քո հայրենի հողի վրա  
Քայլիր հաստատ, վստահ քայլիր,  
Պարտքդ մեծ է, որովհետև  
Մտար մի նոր ոսկեցրջան:

Բ

Արդ թող ուղիդ լինի սլայծառ՝  
Հայրենիքիդ սիրով լեցուն,  
Երդդ հնչի հազարաձայն՝  
Հայրենիքիդ սիրով լեցուն,  
Անշեշ հուրդ թող ջրվեժի  
Քո երդերին ոգու վրա,  
Մութ չմնա ոչ մի կածան՝  
Հայրենիքիդ սիրով լեցուն:

Գ

Շնորհավոր լինի, երկիր,  
Քո նոր տարին հաղթանակի,  
Շնորհավոր լինի կը կին  
Քո նոր տարին հաղթանակի.  
Ա. իս, ինչ հույսեր ունեմ ցանած,  
Ադամանդե ինչքան խռհեր,  
Թող բոլորը սիրով գրեի  
Քո նոր տարին հաղթանակի:

## ՆՄԱՆ ԵՍ ԻՆՉ

Ծնիլ, նման ես, դու նման ես  
իմ սիրուհու լաղուք աչաց,  
իմ սրտի պես սնսահման ես,  
իմ սրտի պես ցասկուտ հաճախու:

Ես քո շուրթին տհա ընկած,  
Ծնիլ, ծծում եմ ջուրդ աղի,  
Եվ ցոլքերը խաղաղընթաց  
Քո ծովային շամանդաղի:

Դու հանդիսու ես այսօր թվում  
Ինչպես մանուկ մտած խոր քուն, —  
Եվ ամպերն են վրադ թեռում,  
Համբուրում են անտես, թաքուն

Գիտեմ, նինջդ կանցնի շուտով  
Դու կարթնանաս խաղաղ քնից, —  
Խաղաղությամբ ու տարերքով,  
Ծով, նման ես, նման ես ինձ:

## ԵՐԿՈՒՆՔԸ

Ծովն է աղմկում անսանձ, խոլաբար,  
Կայծակն իր թրով ամպերն է կիսում,  
Իսկ ես ծովափին լուռ ու դլխաբաց  
Կանդնել, փոթորիկ, քո ձայնն եմ լսում:

Ես սիրահար եմ մանկութ օրերից  
Հողմե, փոթորկի ու խենթ տարերքի,  
Երբ մայրս մի օր աշխարհ բերեց ինձ,—  
Փոթորիկ պայթեց մեր խուլ տանիքին:

Կայծակը խփեց մեր բարդի ծառին,  
Աւղուներ եւան երկնային բոցի,  
Արյուն էր, հըղեհ այդ խավար տարին,—  
Ես գրանից էլ Հուրյան ծնվեցի:

## ՔՈ ԱՅԴ ՓՈՔՐԻԿ ՄԱՐՄՆԻ ՄԵԶ

Քո այդ փոքրիկ մարմնի մեջ  
Սիրու է դրած հսկայական,  
Եվ երգերից կը ակալն անշեջ  
Տվել է քեզ ելողի ալքան:

Դրանից է, որ դու շռայլ,  
Նման մարտում այն հաղթողին,  
Քու հունդերը արևափայլ  
Պահ ես տալիս դու մայլ հողին:

Գիտես, որ ոչ մի հունդ հողում  
Չի կորչելու անարդասիք,  
Եվ կքաղես բերքդ շողուն  
Աշնան շռայլ մըսահասին:

## Հ Ր Ա Վ Ե Ր

Աշուն է, արդեն աշուն, և հավքերը չվում են  
իմ հայրենի աշխարհից դեպի երկիրներն հեռավոր,  
Ծառերը մերկ ճյուղերով շարժվում ու տվավում են  
իրիկունից իրիկուն, առավոտից առավոտ:

Աշուն է, արդեն աշուն, այդիներից քշում են  
լի սայլիրով մըգերը ու խաղողը խնկաղույն,  
Հնձաններն ու մառաններն արդեն լցված խշշում են  
Ու ամեն կաղմ տիրում է առատություն, լիություն,

Խաղալներն են հավաքել, խաղալները դեղնագույն  
Փափառում ու աշունքվա սոկե երգերն են կարդում,  
Ճած են իջնում սարերից քամիները որաթե  
Ու ձմեռվա գալուստն են նրանք արդեն ավետում:

Արեգակի շողերն էլ սարի ետե կորչում են,  
Վերջին սաղարթն է թափում չինարին էլ դարավոր, —  
Ու հավքերը երամով թերն տալով թռչում են  
Դեպի ջերմին երկրներ, իրենց բներն հեռավոր:

Ես դիմում եմ երկնքին, ես դիմում եմ հավքերին,  
Իրենց լեզվով հարազատ դիմում դեպի նրանց չուն,  
— Ուր եք գնում, կոռւնկներ, ուր եք դնում, հավքեր իմ,  
Ուր եք ուղղում դուք ձեր չուն, դեպի ուրտեղ եք թռչում,

Դնում եք տաք երկրներ, գուցի Բաղդադ եք գնում...  
Ելս, ինչու չեք հասկանում ինձ, թռչուններ, թռչուններ,  
Ու չկա ողջ աշխարհում իմ երկրից թանգ անուն,  
Որ արեից կիղիչ է իմ երկրի սառն ձյունն էլ:

Դուք զնում եք, թռչուններ, վործանքներին անպիտակ,  
Ով դիտե ի՞նչ աղետներ ճանապարհին պատահեն,  
Լուլ է մնաք, թռչուններ, իմ հայրենի հարկի տակ,  
Միշտ ապահով կլինեք հայրենիքում իմ ջահել:

Մեկ է, ուր էլ զնաք դուք, ուր էլ չվեք երամով,  
Իմ հայրենի երկրից չկա չքնաղ ու ջերմ վայր,  
Մեղ մոտ ձմեռն էլ անգամ իր բքարեր ցուրտ քամով  
Չեղ ջերմություն կտա միշտ, լլինի ձեղ տուն ու մայր:

Կացեք, կացեք, կոռւնկներ, ևս դիմում եմ ձեղ սրտանց,  
Հաստատվեցեք դուք մեզ մոտ ձմեռ, ամառ ու աշուն,  
Ոչ մի երկիր աշխարհում չունի այնքան սեր ու հաց,  
Քան երկիրն իմ հյուրընկալ, օթևանն իմ ջերմաշունչ:

\* \* \*

Կոռւնկների երամը դեռ ճախրում է օդի մեջ,  
Եվ վինտրում է կարծես նա վայրէջքի տեղ, կամ բացատ...  
Շուրջը աշուն է նազում իր դարդերով շեկ ու ողերձ  
Եվ ձմեռվա քամին է արդեն իշնում սարից ցած:

## ՔԱՄԻՆԵՐ

Իմ հայրենի լեռնաշխարհի,  
Օ, քամիներ խոլ, վիթխարի,  
Որ փշում եք հազարաձև,  
Թոչում այդպես սույլ ու թեթև:

Քամիներ, որ եկել եք դուք  
Մերթ շառաչով, մերթ անաղմուկ,  
Անց եք կացել ձորով, սարով,  
Զեր երկնային ճանապարհով:

Գեթ մի վայրկյան դեմքիս բուրեք,  
Սև դանդուրներն իմ համբուրեք,  
Կրկին անցեք ու գնացեք,  
Անմահության մեջ մտնացեք,

Մեր լեռների կատարներով  
Դուք անցել եք խոլ ու խոռով,  
Համբուրել եք ճակատն անծիր  
Ալտրատի, արագածի:

Վիշապաձև, երկղլխանի  
Ամարնովանին Ախուրյանի,  
Դուք Արաքսի նվիրական  
Ծփանքներն եք տեսել այնքան,

Տեսել երկունքն Հրազդանի,  
Գետն անվլողով Հայաստանի,  
Այունյաց աշխարհն երկնի գրկում  
Քարակառույց և ահարկու:

Ու Գեղամա լեռների մեջ  
Դուք տեսել եք Սևանը պերճ,  
Մանկան խաղաղ աչքի նման。  
Մանկան քնով իոր, անսահման:


Տաճարներն եք տեսել կարկառ,  
Հայ արվեստի հուշն անբարբառ,  
Մեր հնագույն ժամանակի  
Փառքը վսեմ, արեգնակիլ:

Օ՛, քամիներ, օ՛, քամիներ  
Իմ աշխարհի անզին հյուրեր,  
Եկեք մի պահ դեմքիս բուրեք,  
Աև գանգուրներն իմ համբուրեք:

Իմ երդն առեք ձեր թերին,  
Տարեք նրան ձեղ հետ վերին  
Կատարները եթերամուխ,  
Երկլաւակար, ամոլերը թուխ,

Որ ձեղ նման հպարտ լինեն  
Իմ երդերը, վեր սալանեն  
Բարձրության մեջ և անտրամամ,  
Հայրենական սերը սրտում:

the first time  
in the world  
that I have  
seen it  
and I am  
very glad  
to have  
it. It is  
a very  
handsome  
specimen  
and I  
will  
keep it  
for a  
long time.  
I hope  
you will  
be  
pleased  
with it.  
I am  
Yours  
affectionately  
John C. Frémont



SERIOLAS RIB



W. C. G. 1900

## ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

1.

Խտանում են ամպերը պատերազմի ու մահի  
ել ուր որ է երկինքը շուտով անձրև կմաղի,  
ել կլինի աշխարհում մի փոթորիկ էասաղի,  
խտանում են ամպերը պատերազմի ու մահի:

Ուր էլ լինես, իմ՝ ընկեր, դու վառողը չոր պահի,  
Աչքդ արթուն, ոիրտդ բաց, խնդությունդ անաղի,  
խտանում են ամպերը պատերազմի ու մահի,  
ել ուր որ է երկինքը շուտով անձրև կմաղի:

2.

Ոտնահարկած է եղել մարդը բոլոր դարերում,  
Մարդու պատկերն են պղծել տիրակալներն անողոք,  
Վաճառքի են դուրս բերել Մարդուն գնել են փողով,  
Ոտնահարկած է եղել Մարդը բոլոր դարերում:

Արդարությունն են քշել նրանք աքսոր ու գերում,  
Մարդու ձայնն է հեծեծել որպես բռունքը ու բողոք,  
Ոտնահարկած է եղել Մարդը բոլոր դարերում,  
Մարդու պատկերն են պղծել տիրակալներն անողոք:

## 3.

Արդ հպարտ է զողանջում Մարդու ձայնը մեր հողում,  
Աղատական, երջանիկ, վեհագույնից վեհագույն,  
Եվ չենք թողնի, որ նրան նորից փակեն վանդակում,  
Արդ հպարտ է զողանջում մարդու ձայնը մեր հողում:

Երա հուժիու զողանջից սղջ մոլորակն է դողում,  
Նա դարերի կամարում իր անունն է քանդակում,  
Արդ հպարտ է զողանջում Մարդու ձայնը մեր հողում,  
Աղատական, երջանիկ, վեհագույնից վեհագույն:

## 4.

Արյան ծարավ է նորից, մոլեգնում է բորենին,  
Մահվան թռչունն էլ ահա սավառնում է աշխարհում,  
Արդ հվեշը լեշակեր հղվանում է ու սլարում,  
Արյան ծարավ է նորից, մոլեգնում է բորենին,

Ոտնահարում է, այրում նա դաշտերը ցորենի,  
Մըբությունները Մարդու կառավինարան է հրում,  
Արյան ծարավ է նորից, մոլեգնում է բորենին,  
Մահվան թռչունն էլ ահա սավառնում է աշխարհում:

## 5.

Գոտեպնդվիր, իմ ընկեր, մարտի համար շառաչուն,  
Թե ուղում ես լավ ապրել, թե ձգտում ես խաղաղին,  
Թե ուղում ես վաստակել չղառնա թույն և աղի,  
Գոտեպնդվիր, իմ ընկեր, մարտի համար շառաչուն:

Արեմուտքից, աես, արդեն մահվան ցուլն է բառաչում,  
Երազում ևն մեր հողը հրեշները կատաղի,—  
Գոտեպնդվիր, իմ ընկեր, մարտի համար շառաչուն,  
Թե ուղում ես լավ ապրել, թե ձգտում ես խաղաղին:

## 6.

Զինվիր նորից, իմ ընկեր, սրբազան է մեր մարտը,  
Հանուն Մարդու խնդության, արդարության ու հացի,  
Որ չճախը մեր դլխին հաղար հոն ու սրացին,  
Զինվիր նորից, իմ ընկեր, սրբազան է մեր մարտը

Մեղ մոտ, միայն մեղ մոտ է գոհել տունը իր Մարդը,  
Եվ մի թողնի, որ նրանք հահձնեն սովին ու բոցին,  
Զինվիր նորից, իմ ընկեր, սրբազան է մեր մարտը,  
Հանուն Մարդու խնդության, արդարության ու հացի:

## 7.

Չայն տուր, որտեղ էլ լինես, արի գտնենք մենք իրար,  
Մեր երեկվա մարտերի իմ բարեկամ անբաժան,  
Նորից մեր դեմ հանում են ձերմակ դնդերը կաժան,  
Չայն տուր, որտեղ էլ լինես, արի գտնենք մենք իրար:

Նորից ոսկու կուսքերը, ոհմակները հողմավար  
Կամենում են մեր երկրին բերել մահ ու տարածամ,  
Չայն տուր, որտեղ էլ լինես, արի գտնենք մենք իրար,  
Մեր երեկվա մարտերի իմ բարեկամ անբաժան:

## 8.

Ողի, ոգի ներշնչիր քո երգերին, բանաստեղծ,  
Ու երգերով մարտ գնա, ու հավատով մարտ գնա,  
Որ հայրենի փառքը քո հպարտ ու վեհ միշտ մնա.—  
Ողի, ոգի ներշնչիր քո երգերին, բանաստեղծ:

Ապասնում են աղետով հայրենիքիդ փառքին մեծ,  
Քո օրոցքին նետում են թնդանոթ ու քահանա,  
Ողի, ոգի ներշնչիր քո երգերին, բանաստեղծ,  
Ու երգելով մարտ գնա, ու հավատով մարտ գնա:

9.

Դու ծնվել ես այն հողում՝ Արարատյան երկնի տակ,  
Նախնիներդ եղել են աղատության սիրահար,  
Հորդաների դեմ անթիվ մարտ են մղել անդադար,  
Դու ծնվել ես այն հողում՝ Արարատյան երկնի տակ,

Ուր հայրերդ փշրել են օտարերկրյա դահ ու թագ,  
Կեսարի դեմ Հռոմի մարտնչել են քաջաբար,  
Դու ծնվել ես այն հողում՝ Արարատյան երկնի տակ,  
Նախնիներդ եղել են աղատության սիրահար:

10.

Հեքիաթական ու աղնիվ ասպետին ես դու նման,  
Մեծ Միության սիրտն է արդ քո կրծքի տակ ըաբախում,  
Քեզ չի սարսի ոչ մի ուժ, ոչ մի ոհմակ արնախում,  
Հեքիաթական ու աղնիվ ասպետին ես դու նման:

Հաղած նորից ժանո զըստ ու նենգությումը տնսահմտն  
Թշնամին է կատաղի երկրիդ դոնելը ըախում,  
Բայց հեքիաթի այն անպարտ ասպետին ես դու նման,  
Մեծ Միության սիրտն է արդ քո կրծքի տակ ըաբախում:


## ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Տրիումանելով, դազելնելով դռւ չես փրկի ոչինչ,  
Տուր երկրին քո ուրիշ երդ ու հղացում,  
Դու դործած կլինես աղաղակող ոճիր,—  
Եվ երկրիդ վըա կնատի թուխալ ու ձյուն:

Եթե երկրիդ համար չտոկաս դռւ անքուն,  
Երդիդ հանգ չդարձնես ամեն տրովող երակ,  
Նրանց մասին, որոնք ճակատում են հանքում  
Եռկաթի, չուզունի դեմ պայքարի ելած:

Որոնք ճակատ-ճակատի են ելել գազերի դեմ  
Եվ արյուն են տվել քո փրկության համար,  
Եվ կթափեն արյուն նրանք նորից, եթե  
Բո երկրին նայեն արկերը ամպամած:





ՀԱՏՎԱԾՆԵՐ  
„ՖՐԻԿ“ ԶԱՓԱՇՈ  
ԴՐԱՄԱՅՑԻՑ





## ԳՆԱՄ ԱՆՈԹԵՄ...

Գնամ աղոթեմ... բայց ունի աղոթեմ,  
Ո՞ր մեղքիս համար և ինչի՞ համար...  
Գնամ վել ընկնեմ, մազերս փետեմ,—  
Ո՞ր մեղքիս համար և ինչի՞ համար:

Ինչո՞ւ ես տվել էլ մարդուն, դու, տեր,  
Աչքել տեսնելու և սիրո զգալու,  
Ինչո՞ւ ես տվել դարսւն ծաղկաբել  
Եվ սեր սրտերից տանջվելու, լալու:

Ինչո՞ւ ես տվել հուրը քերթության  
Սրբագործելու տենչերը տձե,  
Ասա, հիմա ուր դնա քո ծառան,  
Ոչ լողալ զիտե, ոչ էլ ունի թե...

Գնամ աղոթեմ, բայց ունի աղոթեմ...  
Գնամ աղոթեմ դաշտերին ծաղկած,  
Գնամ խճիթիս չոր հացը ուտեմ,  
Երգի դիցուհուն աղոթեմ տստված:

## ՍԻՐՈՒՆ ԴԵՂՁԵՆԻ ...

Սիրուն դեղձենի, ծաղկած դեղձենի,  
իմ սիրուն էլ քեզ պես ծաղկուն էր մի օր,  
Լցվում էր ամեն հնչյունից, ձենից,  
Սիրուն դեղձենի, ծաղկուն դեղձենի:

Շղթա են դրել իմ մտքին, լեղվին,  
Սիրոս կարոտ է հնչյունի, ձենի,  
Հոգուս դետերը կելնին, կհուզվին,  
Սիրուն դեղձենի, ծաղկուն դեղձենի:

Այս խավար բանտում, խավար աշխարհում  
Այսպես շղթայված եռ մնամ քանի,  
Ցերել չեմ քնում, դիշեր չեմ քնում,  
Սիրուն դեղձենի, ծաղկուն դեղձենի:

Զիս կհալածեն սրբաղան հայրել,  
Վսեմ կոստանդինն, ասա, ի՞նչ անի,  
Սիրոս կրակում կդնեն, կայրեն,  
Սիրուն դեղձենի, ծաղկուն դեղձենի:

## ԿՈՍՏԱՆԴԻՆ, ԼՈԵ

Լոստանդին, լսե, լսե, կոստանդին,  
Մեր հայրենիքը նման է բանտի,  
Խոկ միհնք զերիներ խեղճ, վտարանդին,  
Շղթաներ ունենք մեր բաղուկներին,  
Մեր լիզվի վրա փականքներ ունենք,  
Մինչև երր մնանք օտարի զերին  
Օտարի լուծը մինչև երր կը ենք:

Կտրել եմ ոտքով աշխարհը հայոց,  
Տարոնի վեշով Սյունիքը հասել,  
Ամենուր նույնն է, — շղթաներ ու կոծ,  
Ամենուր ես նույն բողոքն եմ լոել:

Լսե, կոստանդին, լսե, կոստանդին,  
Տնքում է ցավից երկիրը բոլոր,  
Մուր է հարկավոր մեր ժողովրդին,  
Խաչի փոխարեն սուր է հարկավոր:

## ԶՈՐՍ ՏԱՄՆՅԱԿ ՏԱՐԻ ...

Զորս տասնյակ տարի վանքի խուցերում  
Քո պատմությունն եմ դրում, Հայաստան,  
Եյս լուռ խուցերն են եղել իմ վկան,  
Եվ մռթ ձորերն ու երկիրն հայկական  
Լսել են ձայնը իմ երազագին:  
Քո պատմությունն եմ դրում, Հայաստան,  
Որ հաղարամյա փառքդ ալսակեմ,  
Դու, իմ հայրենի ծաղկած բուրաստան,  
Դու իմ ըղձանքի անթառամ եղեմ:  
Ահա խուցերն այս մռայլ ու լոին,  
Իմ ձայնն են լսել չորս տասնյակ տարի,  
Եղեղնյա դրիչն իմ դողդոջ ձեռին  
Եվ հոգով առույգ հաստատ ու արի  
Քո պատմությունն եմ դրել, հայ աշխարհ:  
Թշվառ վիճակդ եմ ողբացել քեզ հետ,  
Եվ մաքառել եմ քեզ պես քաջուբար,  
Քեզնից կըել եմ հալածանք, աղետ,  
Բայց չեմ, չեմ ընկճվել քեզ նման ես էլ,  
Հպարտ դլուխս չեմ թեքել դետին:

## ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է


Մեր հայրենիքն է անհույս տառապում  
ինչպիս վանդակում փակոված մի թոշուն,  
չուզվում է մերթամերթ, հուբեր է թափում;  
Անհուն խոյանքով վերև է թռչում,—  
Բայց թեեր, թեեր չունի աշխարհում...

Ընկնում է անհույս խոնավ հատակին,  
Մեր լավ իղձերն են թոշնում ու մարում  
Ծանր ոտքի տակ օտարի թափի,  
Ինչո՞ւ է աշխարհն այսպիս ստեղծված,  
Ինչո՞ւ է, աստված:

Ամեն, ամեն ինչ կորցրի կյանքում  
Եվ որդուս տարան հարկի փոխանակ,  
Եվ աղետ եկավ, հողուս լույսերը  
Մարեց բովանդակ...

Լոկ, իմ հայրենիք, դու ես մնացել,  
Փոշուված, ընկած քո վերջին շնչում,  
Քո մեծ վերքելն ես իմ առջև բացել,  
Եվ օդնության ես քո որդուն կանչում:  
Կորցրի ամեն ինչ, մնացի անօդ,  
Բայց քեզ, հայրենիք, կգտնիմ, աբդյոք:





ՊՈԵՄԱՆԱԿ





## ԵՐԿՐԻ ԶԱՅՆԸ

I.

Երեկոն իջավ քաղաքի վրա,  
Կապույտ երեկոն Լենինգրադի,  
Նևան լույսերում ծաղկեց, հռոբրաց՝  
Աստղերի բույլը առած ճակատին:

Ռեռլուցիայի պայծառ օրորան,  
Ռեռլուցիայի առաջին ոռումը,  
Պայթեցիր ուժգին ինքնակալության  
Ժանտաժանաւ գլխին դաժան ու զեռուն:

Քեզ, Լենինգրադ, Լենինը հանձար  
Կռեց ու կովկեց պայքարի համար,  
Քեզ Ստալինը գուրզուրեց անչափ,  
Հայրական սիրով, եռանգով անմար:

Քեզ, Ստալինը, Լենինի քաղաք,  
Դարձրեց անառիկ, տվեց նոր հմայք,  
Եվ դու Բալթիկի ջրերին խաղաղ  
Կանգնած ես արթուն պահակի նման:

Լենինի քաղաք, քեզ, Լենինգրադ,  
Ռեռլուցիայի սիրով բոցավառ,  
Փայփայեց, սիրեց Կիրովը կրակ,  
Մեր տրիբունը անմոռաց, անմար:

Ահա նայում եմ ես քեզ, քաղաք իմ,  
Նեայից ելման իմ խինդն է հոսում,  
Դու մեր մարտերի հաղթ զրահակիր,  
Դու կոմունիդմի փայլառակող սուր...

2.

Երեկոն իջավ քաղաքի վրա,  
Կապույտ երեկոն լենինդրագի,  
Նեան լույսերում թաղվեց, հուրիբաց՝  
Աստղերի սլակն առած ճակատին:

Մտանք Սմոլնի առաջին անգամ,  
Առաջին խինդով, հրով առաջին,  
Եվ մեր դեմ ելավ կիրովը հանկարծ,  
Մեր տրիբունը աչքերով իր ջինջ:

Մտանք Սմոլնի մենք երեք հոգով,  
Մի ծերուկ բանվոր, ուսանողն ու ես,  
Եվ կանգնած էր նա, կիրովը, բակում,  
Ժողովուն հայացքով ողջունում էր մեղ...

Բայց այդ արձանն էր անմահ կիրովի,  
Խոյացած դեպի կամարները ձիգ,  
Ժողովուն հայացքով, խաղաղ ու թովիչ,  
Եվ հոգով անմար, պայքարի հրձիր:

Եվ նա կանգնած էր ու տրիբունից  
Հրե խոսքեր էր ասում քաղաքին,  
Եվ իջնում էին ջինջ իրիկունի  
Հովերը մարմանդ նրա ճակատին:

Մենք անցանք բակով, բարձրացանք վերև,  
Մեր առաջ բացին դուռը սենյակի,  
Որտեղ կիրովս էր աշխատում երեկ  
Ռազմիկի կանաչ բլուզը հաղին:

Որտեղ կիրովս էր վառվում, սլայքարում  
Ոսոխների դեմ մեր հայրենիքի,  
իր ջինջ աչքերը դալիքին հառնւմ,  
Զինջ մտքով կարդում դիրքը դալիքի:

Ահա սենյակը, այնպիս, ինչպիս կար,  
Այն վերջին օրը դավագրության,  
Պատուհանները նույն ձևով փակած,  
Կաթնաղույն լույսը պատերի վրա:

Մտանք սենյակը կոկիծով խորին,  
Անհուն կարոտով, հուղմունքով վարար,—  
Ոչինչ չի փոխվել կարծես այն օրից,  
Նույնն են իրերը, համեստ, հասարակ...

Գրասեղանին հանքային նյութեր  
Եվ ուրիշ իրեր պարզ ու հասարակ,  
Թանաքամանն էլ այստեղ նույնիսկ դեռ  
Թանաքով լցված մնում է ահա:

Թանաքամանը—որիչը կողքին,  
Հեռախոսները տղու ձախ շարած,  
Սենյակում լուռ է, լոռություն հանգիստ,—  
Եվ ժամանակը հոսում է արագ:

Ուղիղ նայում է կարծես մել վրա  
Մեծ առաջնորդի նկարը պատից—  
Նրա հայրական սերը հուրնրան  
Մեր սիրտն է լցվում կաթիւ առ կաթիւ:

Այսակ է պայծառ միաքը աշխատել,  
Այստեղ, ամեն տեղ—խորհել է անքուն,  
Նրան սիրել է հոկա Պիտերը,  
Ուրալը հեռու, հարազատ Բաքուն:

Նա միշտ տվել է հարվածներ հզոր  
Թշնամիներին մեր արդար հայի,  
Փռշուն է տվել դահիճներին, որ  
Դավաճանել են լենինյան գծին:

Ու սոցիալիզմի չքնաղ պարտիզում  
Ստալինի հետ մեկտեղ, միասին,  
Նա խնամել է տունկեր սիրասուն,  
Տունկեր դիմացկուն ու խիզախասիրտ:

Հենց այդ էր, այդ էր, որ իժը զեռուն  
Սովոր ստքի տակ և թույնը թափեց...  
Բոլշևիկները երբեք չեն մեռնում,  
Բոլշևիկներին մահ չկա երբեք:

### 3.

Ես տեսա նրան մի պարզ առավոտ  
Սուջնորդի հետ կանգնած միասին,  
Մեծ հայրենիքի ուղուն փառավոր,—  
Վարսես, աշակերտ մեկտեղ, միասիրտ:

Նա, որ սիրում էր կյանքը ջերմ այնքան  
Եվ ինքն էր այդ ջերմ կյանքը կառուցում,  
Թվում էր ահա նա սենյակ կգտ,  
Կդա աչքերը ծիծաղով լեցուն:

Այսպես մտքերով կանգնած սենյակում—  
Ես, ուսանողը... բանվորը մեր հին  
Աչքերով խաղաղ, խոր ու երկնազույն  
Անթարթ նայում էր զբասեղանին:

Եվ նու կռացավ սեղանի վրա,  
Զեռքերը հենց հեռախոսներին.  
— Սերգեյ Միրոնիչ, օ՛ սիրտ հուրիսան,  
Մենք նենդ թշնամուն երբեք չենք ներիւ

— Սերդեյ Միլոնիչ, — ասաց բանվորը, —  
Ես քեզ տեսել եմ... հիշում ես դու ինձ...  
Չեռքով աչքերը դանդաղ տվորեց —  
Արցունքն էր այստեղ թողել պղտոր բիծ...

Ես քեզ տեսել եմ Աստրախանի տակ,  
Կրակի միջին, գիրքերում ուղմի,  
Ուր հայլենիքի սիրով անհատակ  
Դու վարում էիր գնդերը կարմիր:

Ես քեզ տեսել եմ Բաքվում փառահեղ,  
Լենինյան անհաղթ դրոշով ցնծուն,  
Ես քեզ տեսել եմ այստեղ, ամեն տեղ, —  
Միշտ էլ մարտերի առաջին գծում:

Հիմա պայքարը մեր է՛լ ուժեղ է,  
Է՛լ անողոք է թշնամու հանդեպ,  
Մենք մարտ ենք նետել բոլոր ուժերը,  
Որ միշտ թշնամուն քեզ նման շանթենք:

Եվ միշտ շանթել ենք, և միշտ կշանթենք,  
Մեր ձույլ շարքերը ճեղքել չեն կարող,  
Մենք կուռ ենք հիմա ավելի անթեք,  
Չի Ստալինն է մեր զեկը վարում:

Եվ ես ասում եմ սիրելի Կիրով,  
Այստեղ, և ամբողջ երկրի առաջ,  
Որ կոմունիզմի դաշտից ծաղկառատ  
Մեր բազմամիլիոն հուժկու ձեռքերով

Հիմքից կպոկենք դետնից սողացող  
Թունավոր ու նենդ խարդախ թշնամուն  
Եվ կայրենք նրան մեր ցասման բոցով,  
Մոխիրը կտանք սահմարձակ քամուն:

Ու վառվում էին աչքերը հրեշտ,  
Ինչպես լուսավոր աստղերը մովում,  
Եվ լայն ճակատը ճերմակ սարի պես  
Փայլում էր լույսի հրեղեն ծովում:

Ուղիղ նայում էր, կարծես, մեզ վրա,  
Մեծ առաջնորդի նկարը ուատից,  
Նրա հայրական սերը հուրհան  
իմ սիրան էր լցվում կաթիլ առ կաթիլ

Այդպես արևն է առատ ու շոայլ  
Շողերը վոռում երկրի վրա,  
Եվ բույս ու ծառեր առնում են նոր փայլ,  
Եվ կյանքով լցվում, խոյանում արագ:

Եվ լսվում էին զեռ իմ ականջում  
Ծերուկ բանվորի խոսքերն հրեղեն,—  
Այդ երկրի ձայնն էր ցասումով հնչում,  
Այդ նրա հույղն էր այլպես հեղեղել:

Նրա բերանով խոռում էր կարծես  
Մեր բաղմամիլիոն ժողովուրդն արի,  
Որ պայքարում է իր կամքը թրծել,  
Որ անսասան է, վիճ ու անառիկ:

Որ չի տա, չի տա իր բախտը նորից,  
Երջանկությունը ոչ ոքի չի տա,  
Որ խնդությունը մեր ոսկեռիկ  
Կղարձնի է և ճոխ, փթթուն, անխորտակ:

\* \* \*

Ու դեռ հոսում է երեկոն արձակ,  
Հույսերն են վասվում ավելի զորեղ,  
Բակում շողում է մի հսկա սրճան—  
Կաբծես այնտեղ է իջև միջօրեն:

Եվ նա կանգնած է ու տրիբունից  
Հրե խոսքեր է ասում քաղաքին,  
Խաղաղ իջնում են ջինջ իրի կունի  
Հովերը մարմանդ նըա ճակատին:

Մենք դուքս ենք դալիս կամարներից այդ  
Հրաժեշտ տալիս—իջնում ենք քաղաք,—  
Վերից աստղերն են շողշողում անթարթ,  
Դիմը Բալթիկն է կապույտ ու խաղաղ:

—Քեզ, Ստալինը, Լենինի քաղաք,  
Դարձրեց անառիկ, տվեց նոր հմայք,  
Եվ դու Բալթիկի ջրերին խաղաղ  
Կանգնած ես անպարտ ամրոցի նման:

Լենինի քաղաք, քեզ, Լենինգրադ—  
Ռեռլուցիայի սիրու լոցավառ,  
Փայտայեց, սիրեց կիրովը կըակ,  
Մեր տրիբունը անմռաց, անմար:

Ահա հայում եմ ես քեզ, քաղաք իմ,  
Նեայից ելման իմ խինդն է հոսում,  
Դու մոք մարտերի հաղթ զրահակիր,  
Դու կոմունիզմի փայլատակող սուր:

## ՍՈՅԻՆԵՐԻ ՊՈՒՐԱԿՈՒՄ

Սոճիների պլուրակում  
Երեք հոգի կանդ առան,  
Դեմքերով խիստ հողագույն,  
Երեքն էլ լուռ ու մռայլ:

Սոճիների պլուրակում  
Երեք հոգի կանդ առան,  
Սոճու նման հասակով,  
Սոճու նման երկնհառած:

Առավոտն էր փողփողում  
Պերճ սարերի լանջերում,  
Արեգակն էր շողշողում,  
Փայում կյանքը, զուրգուրում:

Արեգակն էր հուր թափում  
Ու փայլփլում լուսերես,  
Եվ երկինքը լուրթ, կապույտ  
Նայում էր ցած մանկան պես:

Նայում էր ցած երկինքն էլ,  
Որպես անծայր հովանի,  
Տեղանող ամպերն են շիկնիլ  
Արեգակից վեհանիստ:

Ապրում, հանդում գարուն է  
Եվ կանաչ է ու ծաղիկ,  
Քըզջում է առուն էլ  
Նման տղջկա ծիծաղին:

Եյանքն է փթթում ամենուր,  
Չորում, արտում ու հանդում,  
Հողին ըերք է կամենում,  
Մարդուն՝ հանգիստ ու խնդում:

Բայց այդ վոքրիկ պուրակում  
Սոճիների երկնաբարձ  
Երկուսը լուռ, հողագույն,  
Մեկը խոժոռ, վեհաբար:

Եանդ առան այդ պուրակում  
Առանց խոռքի, առանց ձայն...  
Կոռւնկների երամով  
Ճերմակ ամպերը անցան:

Եմպերն անցան սահանքով  
Եվ լուծվեցին լուռ անձայն,  
Մեկը կանգնեց սոճու քով,  
Երկուսը առաջ անցան:

Եվ ետ դարձան երեսով  
Դեղին սոճին երկնաբարձ,  
Եվ նայեցին երկուսով,  
Որտեղ այն մհկն էր կանգնած:

Եվ մնացին երեքն էլ  
Լուռ, մտքերի ծովս ընկած,—  
Աքեն արևն էր թիկնել  
Սոճիներին երկնաբարձ:

Եղ կանգնեցին զլխակոր,  
Թախիծով մութ ու անծայր,  
Սոճիների պուրակում—  
Երեքն էլ լուռ ու անձտյն:

Մեկի ձեռքերն են կասլած,  
Երկուսի մոտ հրացան,  
Երկուսի սիրտը կասլար,  
Մեկի սիրտը հրացայտ

Բայց դինոր են երեքն էլ,  
Երեքն էլ մերկ ու քաղցած,—  
Երեքին կյանքն է հեղնել  
Տվել միայն վիշտ ու լաց:

Մեկը մոտիկ լեռներից,  
Խոկ երկուսը շինական,—  
Հրացանը ձեռներին  
Կըակում են մեկին այն:

Հրաման կա անբեկում,  
Որ այդ մեկին սեղհասակ  
Գնդակեն այս պուրակում,  
Այս երկնահաս սոճու տակ:

Դնդակեն, որ քամին ըիրա-  
Չտարածի սերմեր «չար»...  
Հրամանն է շտարի—  
Վերացնել անոլատճառ

Եղ ահա այդ պուրակում  
Սոճիների երկնաբարձ,  
Այն մեկին են կըակում  
Այդ երկուսը միղամած:

Շուրջը խաղաղ, ոչ մի ձայն,  
Առավոտ է նոր ծագած:  
Հետո խոսեց մեկը այն,  
Որ մահվան էր հնթակա:

Այսպես խոսեց այդ մեկը  
Խոր հավատով մի անծայր,  
Արդեն ցրվել էր մեղը  
Ճակատից նրա լայն, պայծառ:

— Եղբայրներ, չէ՞ որ դուք էլ  
Ինձ պես գյուղի ծնունդ եք,  
Դուք էլ նույն վիշտն եք ըմպել,  
Եվ նման ենք իրար մենք:

Եղբայրներ, չէ՞ որ ես էլ  
Իմ ծննդյան օրից դեռ  
Նույնուն լավ օր չեմ տեսել,  
Չեմ խնդացել ես ձեզ պես:

Մեր լավ օրը դեռ կզա,  
Թե ոչ ես, դուք կտեսնեք,  
Կյանքը հիվանդ ու կըած  
Կդառնա խինդ, լույս ու երգ:

Այսօր ինձ եք գնդակում,  
Խոկ վաղը դուք գլխահակ  
Կկանդնեք այս պուրակում,  
Այս նույն ըարձր սոճու տակ:

Որ վերջինը լինեմ ես,—  
Պետք է նրանց կրակել,  
Որոնք դենք են տվել ձեզ  
Եվ այս պուրակն ուզարկել:

Կարծես նրան համաձայն  
Սոճիները սլացիկ,  
Շարժում են նուրբ ու անձայն.  
Գլխիկները գեղեցիկ:

Կարծես նրան համաձայն  
Հովն է լիզվով իր շրջում,  
Եվ ամպերը, որ անցան,  
Այդ խոսքերն են շշնջում:

Երկուոը լուռ խորհեցին  
Թարնանփյին պուրակում,  
Սոճիների կատարին  
Բարակ հովն էր աղմկում:

Ամաչելով իրարից  
Զինվորները այդ երկու, —  
Տարած զրկանք ու կարիք, —  
Նույն խոսքերն են կրկնում:

Հանկարծ նրանք լուռ, անքառ  
Կարդացին սիրտ մեկմեկու, —  
...Միակ ելքը ու ճամփան  
Սոճիների պուրակում:

Եվ մոտեցան այն մեկին,  
— Գնա, — ասին, — աղաս ես,  
Շուտ հեռացիր պուրակից,  
Կկրակենք հենց այնպես:

Եվ գրկեցին իրարու,  
Եղբայրաբար ու անձայն  
Հույզերով ջինջ, վարարուն, —  
...Եվ հեռացավ մեկը այն,

Երբ հեռացավ մեկն արդեն  
Կյանքին դինովը հարբած, —  
Թփից ձգվեց մի չար թև,  
Եվ մեկը նինդ քրքջաց:

Պարզվեց մի մերկ հրացան  
Թփուտների արանքից,  
Սոճիները կռացան,  
Շշնջացին անհանդիսա:

Շշնջացին, կռացան  
Մրտով լեցուն ու հրե, —  
Դարանամուտ աչքը չար  
Նշան բռնեց անվրեսլ:

Միայն երկու կրակոց...  
Եվ զինվորներն այն երկու  
Լուռ սահեցին իրար քով,  
Սոճիների սլուլակում:

Երբ հեռացած մեկը այն  
Հոեց երկու կրակոց,  
Թփաց նրան, թե նրանք  
Հենց այնպես են կրակում:

Թփաց նրան, մեկին այն,  
Որ երկուսը պուրակում  
Իրենց խոստման համաձայն  
Հենց այնպես են կրակում:

Եվ չիմացավ նա ոչինչ,  
Որ այդ վոքրիկ պուրակում  
Լուռ կատարվեց մի ոճիր,  
Հողը դարձավ արնադույն...

Եվ մի կյանքի վոխարեն  
Երկու կյանքեր խլեցին,  
Երկուսն ընկան անարե  
Այն սոճու տակ սլացիկ:

Ընկան նրանք իրար քով  
Եղբոր նման հարապատ:

• • • • •  
Եվ արել երկնքով  
Լողում է յուռ ու աղատ:

Սոճիներն են ավավում  
Կսկիծով մեղմ ու անձայն,  
Կյանքը երադ է թվում,  
Որ շուտ եկավ ու անցավ:

Կյանքը երադ է թվում,  
Երազի ակես գեկեցիկ,  
Դերից ամպերն են չվում,—  
Ներքե—պուրակ ու սոճիք:

Երկու զինովոր, երկու սիրո  
Սոճիների պուրակում,  
Լուռ խամբեցին միասին  
Երկնքի տակ կապտագույն:

Սոճիներից երկնարած  
Օրոբվելով ուս-ուսի  
Երկու տերեւ ընկան ցած,  
Որպես պսակ երկուսի:

Եկավ հովը վշտակոծ  
Մոլ պես լացեց ու անցավ,  
Սոճիները կսկիծով  
Դեղին ներքեւ կռացան.

Հովը եկավ ու փարվեց  
Դիակներին այդ երկու...

Այս բոլորը կատարվեց  
Սոճիների պուրակում:

## ՄԵՔԵՆԱՎԱՐԸ

### 1.

Ես մանում եմ անտառը,  
Պուրակը շաղոտ.  
Ողջունում է ինձ ծառը,  
Սեղը, թուփի ու խոտ:

Ողջունում է ինձ առուն,  
Պուրակը կանաչ,  
Թփերը ինձ են հառում  
Հայացքներն անամպ:

Ինձ գլխով են անում լուս  
կանաչ, սլացիկ  
Մեր անտառի թալմաշուք  
Ծառերը հացի:

Ես նստում եմ նրանց քով,  
Ու նրանց լսում,  
Եվ ձորերով հարատե  
Մեր գետն է հոսում:

Եվ դիշերն է ծավալում  
Զորերի վրա,  
Այստեղ լույսերն են վառվում—  
Հուր ու հուրհրան:

Ծիծաղում են լույսերը  
Նոր կյանքի նման,  
Խնդությունը մեր երկրի  
Անշեյ է ցմահ:

Ալիքվում են բերքաշատ  
Ծովերը հացի,  
Եվ արևն է հուրհում  
Վառ ու լուսածին:

Այսիդ կյանքն է լիաթոք  
Ելնում, խոյանում  
Եվ սնվում են լույս կաթուկ  
Ծերեր ու ժանուկ:

Օրորվում է մեղմաշուք  
Իմ զիւկի վերև  
Մի գեղեցիկ վառ գարուն  
Գիշեր ու ցերեկ:

Օրորվում են ծառերը  
Մեր հին անտառի,  
Եվ ես հեքիաթ եմ լուս  
Ամեն մի ծառից:

Հեռվում թուռն է գալարվում  
Մայրամուտի դեմ,  
Եվ արևն է ցած իջնում  
Լեռների եակ:

Երեկոն է ցած թողնում  
Թհերն իր կապույտ,  
Մեր ձորերում երկրային  
Ասուկեր են թափում:

Նրանք ելնում են մոտիկ  
Հիդրոկայանից,  
Նրանք կապում են գոտի  
Ամեն մի տանից:

Նրանք մահում են ձորը,  
Խավարը ցրում,  
Եվ ահու այդ լույսի տակ  
Ես երկ եմ զրում:

Չույդ գծերն են ոլորվում  
Չորի պոռւնգով,  
Կիրճից խավարն է նայում  
Իր գող հայացքով:

Մեր ձորերով հայրենի  
Կուսական ու վեհ  
Սլանում են ու դառնում  
Գնացքները մեր:

Երբ հասնում են նրանք մեր  
Եզերքին ձորի,  
Երկու սուլոց են տալիս,  
Սլանում նորից:

Երկու անգամ սուլում է  
Ամեն մի զնացք,  
Հիշտակը որ նրանց  
Հար հայիս մնա:

Մեր լեռները այս չքնաղ.  
Չորերը խորունի,  
Ունան հաղար պատմովյուն  
Եվ հաղար զրույց:

Բայց կա մի հուր պատմություն  
Մեր ձորի մասին,  
Որը վեհ է բռլորից,  
Հուր ու հրասիրա:

Այդ պատմությունն է ահա,  
Հիշեցի նորից,  
Երբ մոտեցա այսօր ես  
Մեր չքնաղ ձորին:

Շողշողում են լեռների  
Կատարները սեղ—  
Պատմությունը ահա մեր  
Այս ձորի լսեք,

2.

Մի տարի էր սկ ու մութ,  
Խավար մի տարի,  
Եվ անձրև էր, և թռն էր,  
Ու սով ու կարիք:

Քամին խաղում էր ձորում,  
Լեռան կատարին,  
Ժայռերի կուրծքը փորում, —  
Այդ արնառ տարին:

Ու մշտան էլ իջել էր  
Չորի պոռնղին,  
Ու խավար էր գիշերը,  
Սկ ու անհանդիսա:

Հանկարծ մի խուլ աղմուկով  
Չորը դղրդաց,  
Ավավացին ծառերը  
Ու թփերը թաց:

Մութ էր, խավար, մթան մեջ  
Բան չէր հրեռւմ,  
Կարծես մի սկ աժդահա  
Հրեշտ էր հեռւմ:

Այդ գնացքն էր, գնացքն էր  
Չորերով սողում  
Եվ առջեխց մթան մեջ.  
Մի լույս էր զողում:

Եկավ, եկավ ու կանգնեց,  
Մեքենավարն իջավ ցած,  
Նա դեմք ուներ հողմածեծ,  
Հայացք ամպամած:

Նա փնտրում էր խավարում  
Ինչ որ անկյուն, տեղ,  
Դեմք ժայռն էր համառում,  
Վարում ձորը սկ

Իսկ ներքեռում, ձորում խոր  
Գետն էր վշիշում,  
Ժայռերը սկ երախով  
Թանձր մշուշում:

Ոչ կայարան կա այստեղ,  
Այստեղ ոչ կայան,  
Միայն ժայռերն են նստել  
Մութ ու աժդահատ

Ինչու գնացքը կանգնեց  
Երեք վագոնով,  
Այս գիշելին, ուշ այսպես  
Այդ ի՞նչ են անում:

Դուռը բացվեց դնացքի,  
Որպես գերեզման,  
Դուրս թափվեցին դնացքից  
Անշուկ, անձայն —

Սպաները դինավառ,  
Աչքերում արյուն,  
Գիշերում ուշ ու խավար  
Ի՞նչ է կատարվում...

Սպաները կանդնեցին,  
Փսփռացին խուլ,  
Լոկ անձրեն էր դնացքի  
Դոները բախում:

Փսփռացին շշուկով,  
Տաղնառով մթին  
Եվ նայեցին ձորով վար  
Մոայլուծ դետին:

Ու ժայռերին նայեցին,  
Անդունդին խավար,  
Սպաները արնախում,  
Սպաները մաս:

Հետո նրանք հանեցին  
Մեկին դնացքից...  
(Նրա ճակտին ցանուցիր  
Մաղերի խրձիկ...)

Հանեցին ու բերեցին  
Շողեկառքի մոտ...  
Մեքենավարի դեմքն էր  
Միայն մութ ու ամպուտ

Մեքենավարն էր միայն  
Զգում աղետը,  
Ու մեկ էլ խոր ձնրերով  
Սրբնթաց դհուը...

Եվ թափում էր աչքերից  
Երկինքը զգայուն...  
...Ու տղան էր սեղճառակ  
Լեռներին նայում:

3.

Նա կանգնել էր՝ հայացքը  
Լեռներին հառած,—  
Այնտեղ դյուղն էր իր հանգչում  
Ու մայրը ոլտուավ:

Այնտեղ՝ լեռան ետևում  
Իր դյուղն է հիմա,  
Որտեղ գեռ սովու է թիւմ,  
Հալածանք ու մահ:

Այնտեղ մայրն է իր որդու  
Ճամփին սպառում  
Ծանր խավարն է կորդում  
Աչքերով լաղուր:

Եվ ես տեսա,—հովու տսաց,—  
Նրա մորը ծեր,  
Նա ուսերին իր հյուծված  
Սև շալ էր զցել:

Եվ կանգնել էր տան շիմքին,—  
Տիսուր ու մոլոր—  
Տանջանքն ու ցավը դեմքին,—  
Ի՞նչ իմանաս սիրալ մոր...

Զգացել էր գուցի նա  
կորուստը որդու,  
ի՞նչել, ի՞նչել չի զգա  
Մոք սիրտն իմաստուն:

Նա իր որդուն զբկել էր  
Ոսոխների գեմ,  
իր տչքի լույս, իր որդուն  
Քաջ ու քաջաթիւ:

Ուղարկել էր, որ կովի,  
Երկիրն ազատի,  
Չխնայի որ արյան  
Եղ ոչ մի կաթիւ:

Հավաքել էր որդին էլ  
Քաջ-քաջ տղաներ,  
Դաշնակի ղեմ, հարուստի  
Ելել էր աններ:

Կարմիր ջոկատ նա ուներ,  
Ուներ կարմիր զորք,  
Արծիվի ոլես տղաներ՝  
Քաջ ու անձնազոհ:

Հաղար կոփել էր ալել  
Հաղթել քաջաբար,  
Վաստակել էր քաջ անուն,  
Հերոսի համբավ:

Նա թշնամուն կտրել էր  
Հանգստից, քնից,  
Ու թշնամին սարսում էր  
Նրա անունից:

Սակայն բերեց թշնամին  
Ուժերն իր անթիվ,  
Գաղտազողի ու անձեն,  
Գիշերով մթին:

Եղավ կռիվ տրնահեղ,  
Անհավասար, մեծ  
Ու թշնամին չորս կողմեց  
Նրանց օղակեց:

Ընկերներից շատերը  
Ընկան քաջաբար,  
Եվ շատերն էլ քաջությամբ  
Բացին ճանապարհ:

Օրհասական կռվի մեջ  
Նրան գերեցին...  
Եվ ձեռքերը շղթակառ  
Զորն այս բերեցին:

Ու խավար է ու մութ է  
Ամեն մի անկյուն,  
Ոճիւներից սետեն  
Մայր հողն է անքում:

Ու կանդնել է գնացքը  
Կիրճում այդ խավար,  
Սպաներն են փոփում,  
Սպաները մաս:

Ու կանդնել է այն մեկը  
Գլուխը բարձր  
Ու նայում է խավարին՝  
Ճնշող ու թանձր:

Ու նայում է խավարին,  
Խոսում է կամաց,—  
Ու խոնվում են իր մաքում  
Հուշերն անհամալ:

...Հետո դարձավ լեռներին  
Ու խոսեց այսպես,  
Դառվում էր խավարում  
Աչքերն արծվատես:

— Օ՛, մայր երկիր, մայր անձրև,  
Իմ հարսղատ հող,  
Դահիճներիդ սեասե,  
Բիլու ու դեռնասող,—

Որդիներիդ հանում են  
Մեկ-մեկ կախաղան,—  
Սակայն նրանց տնունը  
Անմիտ կմնա:

Լիոներ իմ վեհ, հարսղատ,  
Հեռվում իմ անակը,  
Շուշով կլինեք դուք ազատ,  
Թող այդ իմանան...

Այստեղ կլուկին վառվեցին  
Աչքերը նըա,  
Այդ սկ ու մութ գիշերում  
Ինչպես զույգ կըակը

Այստեղ ձեռքը նա տարավ  
Ճակատը, հիշեց...  
Իսկ գնացքից ընկել էր  
Լույսի բարակ շերտ...

Հիշեց զուցե իր մոլու,  
Պառավ ու երեր,  
Իրենց տնակը խարիսու—  
Գյուղից քիչ վերև:

Հիշեց հորից ու դարձավ  
Ու խոսեց էլի...  
Մութն էր կրկին խտանաւ  
Ոճիւնելով լի:

— Ազատ խոհը չի մեռնի,  
Որտեղ էլ թաղեն,  
Մերունդները կդոնեն,  
Կտան կքաղեն:

Իմ ընկերները վաղը  
Այս ձորը կգան  
Եվ կըերեն իրենց հետ  
Նոր արև, հոր կյանք:

Նրանք կգան, հայրենիք,  
Քեզ ազատ կանեն,  
Իմ հողերում հայրենի  
Նոր սերմ կցանեն:

Ես էլ, ես էլ նրանց հետ  
Հարություն կառնեմ,—  
Ազատության արևը  
Այստեղ կհառե:

Եվ նա լոեց ու նայեց  
Սեգ լեռներով վեր,—  
Կարծես անխոս ըոլորին  
Հրաժեշտ տվեց:

Երկու սպա զի՞նավան

Մոտեցան նրան—

Դեմքը լաթով ծածկեցին

Շողեկառք տարան:

Հետո նրան հրեցին

Կաթուայի մեջ վառ,

Էլ չլսվեց ոչ մի ձեն,

Ոչ մի, ոչ մի բառ:

Կափարիչը վակեցին

Հսկա կաթուայի,—

Սպաների հայացքը

Մութ, հրեշտային:

Միտյն կրակը ներսում

Բորբոքվեց, եռաց,

Դեմը խավարն էր հսկում,

Ու ձորը մուայլ:

Ել երկինքը, որ մութ էր,

Աչքերից քամեց,—

Այդպես մայրն է խուլ ողբում

Որդուն վաղամեռ:

Մեքենավարը ծերուկ

Երեսը շրջեց,

Արցունքն իջավ աչքերից

Այտելը թրջեց:

Մեքենավարը միայն

Կոկծաց խորունկ,—

Այդ լնչ, այդ լնչ կատարվեց

Այդ մթին ձորում:

Սպաները խնդացին,  
Հոհուացին խուլ,  
Սպաները ժանտատես  
Նենդ ու արնախում:

Ու խուճապով ու արտկ  
Գնացք բարձրացան...  
Եվ վրեժն էր հետամուս  
Անշշուկ, անձայն...

—Քիր գնացքը, —տսաց  
Մելը նրանցից,  
Եվ ձորերը լռեցին  
Կոկիծով անծիր:

4.

Բայց չի շարժվում գնացքը,  
Գնացքը խավար,  
Մեքենավարն է մոայլ  
Նայում ձորով վար:

Ու մեխված է կարծես նա  
Հայրենի հողից,  
Ու չի շարժվում, չի շարժվում  
Գնացքը տեղից:

Մեքենավարն է զննում  
Կաթսան ուշադիր,  
Եվ բարդվում են ամոերը  
Նրա ճակատին:

Մեքենավարը ուրիշ  
Բան չի նկատում.  
Նրա սրտից անսահման  
Արյուն է կաթում:

Ու հոսում են այտերով  
Արցունքներն աղի,  
Կարծես, կարծես նա թաղեց  
Հարազատ աղին...

Բայց սթափովեց նա շռտով,  
Ելավ շոգեկառք,  
Ու կրակն էր բորբոքվում  
Քուրայում հսկա:

Ու կրակն էր բորբոքվում,  
Մոնչում էր խուլ  
Ու երկաթե ձեռքերով  
Դոնելը բախում:

Մեքենավարը ձեռքը  
Տարավ շշակին,  
Եվ բարձրացավ ձորերում  
Մի ճիչ տհադին:

Դա բողոք էր կարծես թե  
Միլիոն սրաերի,  
Որ դղրդաց այսպես խուլ,  
Այսպես ոխերիմ:

Որպես հսկա մի վիշտակ  
Գնացքը փնչաց:  
Որպես վայրի մի դադան  
Մոլի՛ ու քաղցած:

Ոռնգերից երկաթե  
Յառկոտ հուր թափեց,  
Հրեշի պես սլացավ  
Զդված, անհամբեր:

Շոկեկառքն է մոնչուժ  
Մոլեգնած, ահեղ  
Նրա ընթացքը ոչ ոք  
Չի կարող պահել:

Զույգ դժերն են ոլորվում  
Զորի սլոռնգով,  
Շուրջը սառսուռ են փռում  
Անդունդները դուռ

Մեքենավարն է նայում  
Բարոք կրակին,  
Այդ կրակ չէ, — աչքերն են  
Վասվում այն մեկին

Այդ վառվում են աչքերը,  
Խավարը կիսում,  
Հուսավորում ամեն մոլխ  
Այդ հուբերը զույգ:

Եվ աչքերն այդ կրակին,  
Ականջն այդ ճիշին,  
Մեքենավարը արավ  
Հաստատ մի վճիռ:

Զեռքերը սեղմեց նա ղեկին  
Հաստատ, անվարան,  
Եվ դնացքը ուացավ  
Հողմից էլ արագ:

5.

Հանկարծ այդ մուխ ձորելում  
Դղբղաց մի ըան,  
Կարծես հսկա լեռները  
Եղան տեղահան:

Դինամիտ էր ահոելի,  
Որ ձորում թնդաց,  
Երկրաշախ էր, որ այդպես  
Ահեղ դղրդաց:

Թե լավա էր, որ ժայթքեց  
Կիրճերից խորունել...  
Այդ ի՞նչ, այդ ի՞նչ կատարվեց  
Այդ մթին ձորում:

Այդ գնացք էր, այդ դնացք էր,  
Գտնավիժեց ցած,  
Արձագանքը ահոելի  
Լեռներում թնդաց:

Մեքենավարը ծելուկ  
Հաստատ, անվարան,  
Գնացքն երեք վազոնով  
Դիմի ձոր տարավ:

Զորը խավար ու անտակ,  
Ժայռով սեղածեն,  
Երանց առաջ իր ահեղ  
Երախը բացեց:

6.

Ալանում են հիմա մեր  
Գնացքներն աղատ  
Բաց ճամփեքով մեր անծայլ  
Երկրի հարազատ:

Մեր ձորերում հայրենի  
Աղատ, անարզել  
Ալանում են ու դառնում  
Գնացքները մեր:

Ամեն դնացք անցնելիս  
Սուլում է հատու,  
Եվ լսում են այդ ձիչը  
Ամեն գյուղ ու տուն:

Հիշատակն է սուլոցն այդ  
Ընկած հերոսի,  
Որը ուներ քաջ անուն,  
Ուներ անվախ սիրտ:

Որը կովեց հայրենի  
Երկրի համար,  
Որը ընկավ, բայց պահեց  
Իր սիրտը անմար:

Որը վառվեց, մոխրացավ,  
Բայց անմար մնաց,  
Որը մեղ հետ դեռ էլի  
Կովի կզնա:

Երկրորդ սուլոցն են տալիս  
Գնացքները մեր  
Մեքենավարի համար՝  
Խիզախ, անվիճեր:

Որն իր մահով գեղեցիկ  
Վրեժը լուծեց,  
Սպաներով գնացքը  
Այս ձորը դցեց:

Երկու անգամ սուլում են  
Գնացքները մեր,  
Հերոսներին հիշատակ  
Անժռաց, անմիո,

Ուսոնք ընկան այս ձորում  
Հեղոսի մահով,  
Երբ երկիրը դելոված էր  
Ու լիքն էր ահով:

\* \* \*

Հավերժ, հավերժ հիշատակ  
Այն քաջ պատահուն,  
Ու մեքենավարին այն՝  
Խիղախ, անսունուն:

Մեր ձորերի ծառերը,  
Զբերն անաբար,  
Թող շշնջան, կտըկաչին  
Հավետ ձեզ վրա:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

52

*Թաթուլ հուրյան*

3

## ՆԱԽԵՐԳԱՆՔ

*Աստղը*

11

## ՍԵՎԱՍՏԱՊՈԼՅԱՆ ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<i>Սիամառնալու</i>	<i>17</i>
<i>Երկու մանուկ</i>	<i>19</i>
<i>Մեկենզեյան լեռներում</i>	<i>21</i>
<i>Վերադարձ</i>	<i>23</i>
<i>Ծխում ևն նորից</i>	<i>25</i>

## ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

<i>Չորիում</i>	<i>29</i>
<i>Մեռելս</i>	<i>31</i>
<i>Ռախաս Ռիժիկ</i>	<i>34</i>
<i>Ա. Ա. Պուշկինին</i>	<i>39</i>
<i>Էլեղիա</i>	<i>40</i>
<i>Բարիկադի վրա</i>	<i>43</i>
<i>«Ակրք Հոյաստանի»</i>	<i>43</i>

## ԽԱՌՆ ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<i>Կրեմլը</i>	<i>47</i>
<i>Հերսոսովյան երգերից</i>	<i>54</i>
<i>Մալշալ</i>	<i>58</i>
<i>Անմահություն</i>	<i>61</i>
<i>Ես աշխարհում ամենից շատ</i>	<i>62</i>
<i>Պահակը</i>	<i>63</i>
<i>Դեպի Ռուկափինու</i>	<i>64</i>
*	<i>65</i>

Մանկություն	66
Զոհ	68
Գնաց սարով իմ եղնիկը	69
Կարոտ	70
Նամակ	71
Անձնվիրություն	72
Նամակ	73
Ճամփորդը	75
Իրախուսանք	76
Հուշեր	77
Թող լինի	78
Դրսում ձանձրաշեշտ	79
Ես երազում եմ	80
Մայր Արտօսի ավերին	81
Հուշ	84
Քեզ տառմ եմ	85
Ես չեմ մոռանա	86
Տաղեր նոր ստրու	87
Նման ես ինձ	89
Երկունքը	90
Քո այդ փոքրիկ մարմնի մեջ	91
Հրավեր	92
Քամիներ	93

#### ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

Տրիոլետներ	96
Փրկությունը	103

#### ՀԱՏՎԱԾՆԵՐ «ՖՐԻԿ» ԶԱՓԱԾՈ ԴՐԱՄԱՅԻՑ

Գնամ աղոթեմ	107
Սիրուն դեղձենի	108
Կաստանղին, լու	109
Զոքս տասնյակ տարի	110
Մեր հայրենիքն է	111

#### ՊՈԵՄՆԵՐ

Երկը ձայնը	113
Սոճիների պուրակում	122
Մերենավարը	130



Կազմը, անվանակիրքը և  
շմուցափառելները՝ Բ. ՄԱԶՄԱՆՅԱՆԻ

Տեխ. խմբագիր՝ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ  
Կոնտրոլ սրբադրիչ՝ Վ. ԴԱԲԵՍՅԱՆ

ՎՅ 02871: Պատվեր 208: Տիրած 3000:  
Տպագրական 9<sup>1</sup>/<sub>2</sub> մամուլ Հանձնված  
է արտադրություն 9/V 1949 թ.:  
Սուրագրվ. է տպ. 25/VI 1949 թ.  

---

Հայոլուղբարձրատի Վարչության  
№ 3 տպարան, Ալա-  
վերդյան, № 65,  
Երևան, 1949 թ.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028440

Ques 8 n. 50 v.

